ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԵԴ - 09 - 2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «15» «04» 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության նախագահ Նազիկ Ավագյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի հունվարի 10-ի N 08-Ա/2 հրամանով հաստատված «Մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացում՝ ուղղված մեդիագրագիտությանը, թվային գրագիտությանը և կիբեռգրագիտությանը» միջոցառման շրջանակներում դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 15-ի նիստի 03/24 և 2024 թվականի ապրիլի 11-ի նիստի 04/24 արձանագրությունները՝ որոշման «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված միջոցառումներ» միջոցառման (տող՝ «Մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացում՝ ուղղված մեդիագրագիտությանը, թվային գրագիտությանը և կիբեռգրագիտությանը» շրջանակներում «ՀՀ մարզաբնակ ուսանողների մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր՝ ԱՊՀ երիտասարդների հետ համագործակցությամբ» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1.-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված գումարից 4765.2 հազար (չորս միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար երկու հարյուր) դրամ՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ

կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N 1-ում, իսկ ծրագրի նկարագիրը՝ Հավելված N 3-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2.-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3.-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. պետական մարմնի կողմից ծրագրի իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի Կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. ծրագրի իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև ծրագրի իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.8. սույն պայմանագրից բխող ծրագիրը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.10. սույն պայմանագրի 7.1.-ին կետով սահմանված ժամկետներում պաշտոնական գրությամբ պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 4-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով՝ համաձայն հավելված N 5-ի: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար:

2.4.11. սույն պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (Հավելված N 6) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված ծրագիրը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե սույն պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում սույն պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1.-ին կետում սահմանված գումարի 80%-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, ապրիլ ամսին, իսկ 20%-ը՝ սույն պայմանագրի 4.1.-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.2. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, բայց ոչ ուշ, քան դեկտեմբերի 10-ը:

7.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.3. Սույն պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանի լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2.Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինն այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն հասարակական կազմակերպություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2	Ք. Ստեփանավան, Եկեղեցի փ., N 24
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 11808036948100, ՀՎՀՀ 06950266
Գլխավոր քարտուղար՝	kamqlori@gmail.com
Հ. Հակոբյան	Նախագահ՝
	Ն. Ավագյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.
	«ԿԱՄՔ» «KAMK» «KAMQ»

Հավելված N 1
« 15 » « 04 » 2024 թ.
N ԵԴ-09- 2024 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Ծրագրի անմիջական հայ և այլազգի շահառուների թվային գրագիտության, մեդիա գրագիտության և կիբեռգրագիտության կարողությունների զարգացում	ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերի բուհերից և ԱՊՀ անդամ պետությունների երկրներից առցանց հայտադիմումների հիման վրա կընտրվեն թվային գրագիտության, մեդիագրագիտության և կիբեռգրագիտության ուղղությամբ գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու կարիք/ցանկություն ունեցող 16-30 տարեկան 150 երիտասարդներ (120 ՀՀ մարզերից, 30-ը ԱՊՀ երկրներից), որոնք մասնակցելով առցանց դասընթացների՝ ձեռք կբերեն գիտելիքներ և հմտություններ մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության ուղղությամբ:	1.Ծրագրի նախապատրաստական աշխատանքներ, պայմանագրերի կնքում, գնման գործընթացների կազմակերպում: 2. Ծրագրի մասին տեղեկատվության և դասընթացների մասնակցության առցանց հայտադիմումի (հայերեն և ռուսերեն լեզուներով) պատրաստում և տարածում: 3. Ծրագրի առաջին փուլում նախատեսված առցանց դասընթացների կազմակերպչական աշխատանքներ: 4. Ծրագրի հայ և այլազգի շահառուների ընտրություն, մասնակիցների հետ կապի ապահովում: 5. Կարողությունների զարգացման առցանց դասընթացների անցկացում (օնլայն, 1 օր, նվազագույնը չորս ժամ տևողությամբ, 5-7 հանդիպում, յուր.-ին առավելագույնը մինչև 30 մասնակից): 6.Թվային միջավայրում առավել հանդիպող վտանգների ու կիբեռհանցագործությունների ուսումնասիրությունների անցկացում և շահառուների կողմից հոդված-զեկույցների	Ծրագրի թիրախ մարզերի բուհերից և ԱՊՀ անդամ պետություններից ընտրված վերապատրաստված և թվային միջավայրում գրագետ/մեդիագրագետ 150 երիտասարդներ (120 ՀՀ մարզերից, 30-ը ԱՊՀ երկրներից), ովքեր զարգացրել են իրենց կարողությունները մեդիագրագիտության, կիբեռգրագիտության, թվային գրագիտության ոլորտում, գիտեն ինչպես ստուգել տեղեկատվությունը, տարբերակել ճիշտ ու կեղծ ինֆորմացիան, զգուշանալ թվային միջավայրում տարածված տարատեսակ կիբեռհանցագործություններից (Հափելության ցուցիչ՝ առցանց 5-7դասընթացների էկրանի լուսանկարներ, մասնակիցների գրանցման առցանց թերթիկներ, մասնակիցների կողմից լրացված դասընթացների գնահատման թերթիկներ, տեսադասերի ձայնագրություններ, ծրագրի ամփոփիչ տեսաֆիլմ):	31.07.2024թ.	համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2024թ.	372.0

			պատրաստում: 7. Առցանց դասընթացների ամփոփում, գնահատում, շահառուների հետ հետադարձ կապն ապահովող գործիքակազմի մշակում:				
2	Մեդիագրագիտության և թվային գրագիտության մարզային առաջնորդների վերապատրաստում, դասավանդման կարողությունների զարգացում:	Ծրագրի առաջին փուլի առցնաց դասընթացներին մասնակցած << մարզաբնակ ուսանողներից կընտրվեն մեդիագրագիտության և թվային գրագիտության մարզային առաջնորդներ (յուր. Մարզից 5 երիտասարդ, ընդհանուր 30) , որոնք կմասնակցեն Ստեփանավան քաղաքում կազմակերպված «Մեդիագրագետ ուսանող» եռօրյա ամառային ճամբարի, որը կներառի մեդիագրագիտության և թվային գրագիտության վերաբերյալ խորացված ութժամյա դասընթացներ և դասավանդման մեթոդաբանություն, օնլայն-օֆլայն ձևաչափով կոնֆերանս-հանդիպում ԱՊՀ անդամ երկրների՝ ծրագրի շահառու երիտասարդների հետ, որի ընթացքում կքննարկեն և կներկայացնեն իրենց ուսումնասիրությունները տարածաշրջանում (ԱՊՀ երկրներում, << մարզերում) առավել հանդիպող կիբերհանցագործությունների վերաբերյալ: Շահառուները կմասնակցեն թվային միջավայրում անվտանգ լինելու վերաբերյալ ուսումնական տեսաֆիլմի սցենարի պատրաստման և նկարահանման աշխատանքներին, ինչպես նաև՝ «Մեդիամարտ» ինտելեկտուալ միջմարզային խաղ-մրցույթի (բրեյն-ռինգ), առաջին երեք տեղերն զբաղեցրած թիմերը	8.Առցանց դասընթացներին մասնակցած մարզաբնակ հայ երիտասարդներից թվային գրագիտության մարզային առաջնորդների ընտրություն: 9.Թվային գրագիտության մարզային առաջնորդների համար «Մեդիագրագետ ուսանող» ամառային եռօրյա ճամբարի նախապատրաստական աշխատանքներ՝ շապիկների տպագրում, ուղևորափոխադրման, կեցության և այլ հարցերի կարգավորում: 10. Ամառային եռօրյա ճամբարի դասընթացների անցկացում: 11. Ճամբարի մասնակից ուսանողների և ԱՊՀ երկրների ծրագրի շահառու երիտասարդների մասնակցությամբ առկա-հեռակա ձևաչափով կոնֆերանս-քննարկում թվային միջավայրում առավել տարածված կիբեռհանցագործությունների ու դրանցից պաշտպանվելու մասին: 12.Կիբեռհանցագործությունների և դրանցից պաշտպանվելու վերաբերյալ ուսուցողական-խորհրդատվական տեսահոլովակի նկարահանում: 13.«Մեդիամարտ» ինտելեկտուալ միջմարզային խաղ-մրցույթի անցկացում ,մրցնկաբաշխություն: 14. Ճամբարի արդյունքների ամփոփում,	<< մարզերից ընտրված և վերապատրաստված մեդիագրագիտության և թվային գրագիտության մարզային 30 առաջնորդներ (յուրաքանչյուր մարզից 5 երիտասարդ), որոնք մասնակցել են մեդիագրագիտության և թվային գրագիտության եռօրյա ամառային ճամբարի, ձեռք են բերել հիշյալ թեմաներով դասընթացներ վարելու մեթոդաբանություն, մասնակցել ուսումնական տեսաֆիլմի պատրաստման աշխատանքներին, «Մեդիամարտ» ինտելեկտուալ միջմարզային խաղ-մրցույթի, ԱՊՀ անդամ երկրների՝ ծրագրի շահառու երիտասարդների հետ մասնակցել առցանց կոնֆերանս-հանդիպման՝ քննարկելով տարածաշրջանում առավել շատ հանդիպող մեդիամանիպուլյացիաներն ու կիբերհանցագործությունների տեսակները և ծրագրի շնորհիվ կարողեն թվային միջավայրի վտանգներից պաշտպանել ոչ միայն իրենց, այլև ընտանիքի անդամներին, հարազատներին, ընկերներին: (Հափ. ցուցիչ՝ ընտրված 30 երիտասարդների անձնական տվյալներ, ամառային ճամբարի շրջանակում անցկացված միջոցառումների	31.08.2024թ	համաձայն << ԿԳՄՄՆ-ի կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2024թ.	2337.0

		կպարգևատրվեն:	մասնակիցների կողմից գնահատում, մասնակիցներին հավաստագրերի հանձնում, հետադարձ կապի ապահովում:	լուսանկարներ, մասնակիցների գրանցման թերթիկներ, դասընթացի մասնակիցների թեմայի վերաբերյալ գիտելիքների նախնական և վերջնական գնահատման թերթիկներ, մասնակիցների կողմից լրացված գնահատման անանուն թերթիկներ, շահառուների ներգրավմամբ ուսումնական-խորհրդատավական տեսահոլովակի առկայություն, «Մեդիամարտ» ինտելեկտուալ խաղ-մրցույթի արդյունքների արձանագրություն, ծրագրային արդյունքների ամփոփիչ տեսաֆիլմ/տեսագրված հարազրույցներ դասընթացների մասին):	1 1 1		
3	Ծրագրի շահառու ՀՀ մարզաբնակ ուսանողների և ԱՊՀ երիտասարդների միջև համագործակցության մեդիա հարթակի ստեղծում և տարածաշրջանում թվային միջավայրում հանդիպող վտանգների, մեդիամանիպուլյացիաների և կիբեռհանցագործությունների ուսումնասիրում և բարձրաձայնում:	Առցանց դասընթացների ավարտից հետո կստեղծվի ծրագրի անունով ֆեյսբուքյան փակ խումբ/զրուցարան, որում կներառվեն ծրագրի շահառու հայ և այլազգի երիտասարդները՝ հնարավորություն ունենալով համագործակցել միմյանց հետ: Նրանց կհանձնարարվի ուսումնասիրել թվային միջավայրում իրենց առավել հանդիպող վտանգներն ու կիբեռհանցագործությունների դեպքերը/տեսակները և դրանք ամփոփել որպես զեկույց-հոդված: Զեկույցները կներկայացվեն ԱՊՀ անդամ երկրների երիտասարդների առցանց կոնֆերանս-հանդիպան ընթացքում, ինչպես նաև կհրապարակվեն blogger.com, tilda կամ այլ ինտերնետային որևէ հարթակում ինչպես նաև	15. Ծրագրի հայ և այլազգի շահառուների համար ֆեյսբուքյան խմբի և զրուցարանի ստեղծում: Շահառուների կողմից ստուգված մեդիա բովանդակությունների և օգտակար մեդիա նյութերի տեղադրում: 16. Ծրագրի շահառու երիտասարդների կողմից թվային միջավայրում հանդիպող վտանգների ու կիբեռհանցագործությունների ուսումնասիրություն և հոդված-զեկույցների պատրաստում: 17. Ներկայացված հոդված-զեկույցների խմբագրում և հրապարակում blogger.com, tilda կամ այլ համացանցային հարթակում: 18. Շահառու հայ և այլազգի երիտասարդների մասնակցությամբ ուսումնական-խորհրդատվական տեսահոլովակի պատրաստում:	ԱՊՀ երկրների երիտասարդների և ՀՀ մարզերի բուհերի ուսանողների միջև ստեղծված է համագործակցության մեդիա հարթակ, ներկայացված են տարածաշրջանում թվային միջավայրում առավել շատ տարածված կիբեռհանցագործությունների վերաբերյալ շահառուների ուսումնասիրությունները՝ որպես զեկույց-հոդվածներ, որոնք ներկայացվել են ԱՊՀ անդամ երկրների երիտասարդների մասնակցությամբ առցանց կոնֆերանս-հանդիպան ընթացքում, հանրայնացված են blogger.com, tilda կամ այլ ինտերնետային որևէ հարթակում ինչպես նաև շահառուների ներգրավմամբ պատրաստված	30.09.2024թ	համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2024թ.	390.0

		կինչեն շահառուների ներգրավմամբ պատրաստված տեսանյութում:		տեսանյութում: Ծրագրի շահառու մեդիագրագետ հայ և օտարազգի երիտասարդները ներառված են հատուկ այս ծրագրի համար բացված «Մեդիագրագետ երիտասարդների բանակ» կամ «ԱՊՀ մեդիագրագետ երիտասարդներ» ֆեյսբուքյան ռուսալեզու փակ խմբին: (Չափելության ցուցիչ՝ ԱՊՀ երկրների երիտասարդների և ՀՀ մարզաբնակ ուսանողների մասնակցությամբ օնլայն-օֆլայն ձևաչափով անցկացված 1 կոնֆերանսի տեսաձայնագրություն, նկարներ, մասնակիցների գրանցման թերթիկներ, կիբեռհանցագործությունների և մեդիամնահպուլյացիաների վերաբերյալ մասնակիցների կողմից ներկայացված առնվազն 15 զեկույցներ, blogger.com, tilda կամ այլ հարթակում, հայ և այլազգի երիտասարդների մասնակցությամբ պատրաստված ուսումնական1 տեսանյութի առկայություն՝ հայերեն լեզվով ռուսերեն նշագրերով կամ հակառակը, հոլովակի հղումը համացանցում, դիտումների քանակը, ծրագրի շրջանակում բացված ֆեյսբուքյան հարթակի հղումը):			

4	Թվային գրագիտության մարզային առաջնորդների միջոցով մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության տարածում ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերում:	Թվային գրագիտության և մեդիագրագիտության մարզային առաջնորդները, որոնք հաջողությամբ մասնակցել են «Մեդիագրագետ ուսանող» ամառային ճամաբարին դասընթացավարներ-փորձագետների հետ կմշակեն տեղեկատվական հանդիպում-սեմինարների նյութեր և իրենց մարզերի բուհերում ուսանողների շրջանում կանցկացնեն տեղեկատվական հանդիպում-սեմինարներ մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության առանցքային հարցերի վերաբերյալ: Տեղեկատվական հանդիպումներին, ինչպես նաև առցանց դասընթացներին մասնակցած ծրագրի անմիջական շահառու ուսանողները իրենց ստացած գիտելիքները կփոխանցեն ընտանիքի անդամներին, ընկերներին, այդ կերպ մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության վերաբերյալ տեղեկատվությունը կտարածվի ծրագրի շահառու մարզերի համայնքներում՝ նկատի ունենալով, որ մարզերի բուհերում սովորում են տվյալ մարզի տարբեր քաղաքային և գյուղական համայնքներից երիտասարդներ:	19. Մարզերում թվային գրագիտության առաջնորդների կողմից անցկացվելիք տեղեկատվական արշավների բովանդակային նյութերի մշակում, շահառու երիտասարդների՝ որպես դասընթացվարների կարողությունների զարգացում: 20. Տեղեկատվական հանդիպումների անցկացման համար պայմանավորվածություններ ի ձեռքբերում մարզերի բուհերի հետ. տեղեկատվական հանդիպում-սեմինարների կազմակերպչական աշխատանքներ, ժամանակացույցի հստակեցում: 21.Շահառու մարզերի բուհերում տեղեկատվական հանդիպում-սեմինարների անցկացում: 22. Տեղեկատվական հանդիպում-սեմինարների ամփոփում,գնահատում, հետագա համագործակցության և հետադարձ կապի ապահովում, ըստ ցանկության ներառում «ԱՊՀ մեդիագրագետ երիտասարդներ» Ֆեյսբուքյան խմբում:	ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերում՝ հատկապես բուհերի ուսանողների շրջանում, մեդիագրագիտության, կիբեռգրագիտության և թվային գրագիտության վերաբերյալ գիտելիքների մակարդակի բարձրացում: (Չափելիության ցուցիչ՝ թվային գրագիտության մարզային առաջնորդների կողմից մարզերի բուհերում մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության առանցքային հարցերի վերաբերյալ կազմակերպված առնվազն 10 տեղեկատվական հանդիպում-սեմինարների լուսանկարներ, մասնակիցների մասնակցության թերթիկներ. Նախատեսվում է առնվազն 200 ուսանողների մասնակցություն):	31.10.2024թ.	համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2024թ.	300.0

Ծրագրի ամփոփում և գնահատում:	Ծրագրի աշխատակազմի կողմից կկատարվի ծրագրի արդյունքների մոնիթորինգ և գնահատում, կպատրաստվի ծրագրի ամբողջ ընթացքի վերաբերյալ ամփոփիչ տեսաֆիլմ, որը կտարածվի համացանցում, կտրվի շահառուներին, շահագրգիռ կողմերին: Ծրագրի վերաբերյալ կպատրաստվեն ամփոփիչ տեղեկատվական հոդվածներ, մամուլի հաղորդագրություններ, որոնք կուղարկվեն տեղական և հանրապետական ՁԼՄ_ներին: Կպատրաստվի ծրագրի նկարագրական և ֆինանսական հաշվետվությունները՝ կից հավելվածներով, որոնք կհաձնվեն դրամաշնորհատու կազմակերպությանը՝ ՀՀ ԿԳՄՄՆ-ին, ինչպես նաև կպահպանվեն ծրագիրն իրականացնող ՀԿ-ի արխիվում:	23. Ծրագրի վերաբերյալ ամփոփիչ տեսաֆիլմի պատրաստում: 24. Ծրագրի լուսաբանում ՁԼՄ-ներում: 25. Ծրագրի ամփոփում, գնահատում, նկարագրական և ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և հանձնում ՀՀ ԿԳՄՄՆ-ին:	Ծրագրի ներկայացնող տեսանելիությունը ապահովող ամփոփիչ 1 տեսաֆիլմի առկայություն (15-20 րոպե տևողությամբ), ծրագրի արդյունքների վերլուծություն՝ անմիջական շահառուների թեմայի վերաբերյալ գիտելիքների նախնական և վերջնական գնահատման արդյունքների ամփոփիչ վերլուծությունների առկայություն, շահառուների կարծիքներ ծրագրի մասին, ՁԼՄ-ներում ծրագրի վերաբերյալ նյութերի՝ հոդվածների հղումների առկայություն, ծրագրի ֆինասնական և նկարագրական հաշվետվությունների առկայություն՝ կից հավելվածներով (լուսանկարներ, տեսանյութեր, գնահատման և մասնակցության թերթիկներ, ֆինասնական, հաշվապահական հաշվառման ծրագրային փաստաթղթեր):	ընթացքը 30.11.24թ.	30.11.20	համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից սահմանված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների ներկայացման կարգի և ձևաչափի մինչև 10.12.2024թ.	572.0
ԸՆԴԱՄԵՆԸ՝							3971.0
ԱԱՀ							794.2
ԱՄԲՈՂՋԸ՝							4765.2

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն
հասարակական կազմակերպություն
Քաղաք Ստեփանավան, Եկեղեցի փ., N 24
«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11808036948100, ՀՎՀՀ 06950266
kamqlori@gmail.com
Նախագահ՝
Ն. Ավագյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
«15» «09» 2024 թ.
N ԵԴ-09-2024 պայմանագրի

ՖԻՆԱՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՀՀ մարզաբնակ ուսանողների մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր՝ ԱՊՀ երիտասարդների հետ համագործակցությամբ» ծրագրի

	Ծախսատեսակի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Աշխատավարձ (ներառյալ հարկերը)***				
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	2	132.0	264.0
1.2	Ծրագրի համակարգող	ամիս	2	120.0	240.0
1.3	Ծրագրի հաշվապահ	ամիս	2	120.0	240.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 1				**744.0**
2	**Կեցության ծախսեր՝ (հյուրանոցային ծառայություն)՝ այդ թվում**				
2.1	Կեցություն (35 մարդ x 3 օր x 11.5 հազ. դրամ)	հատ	1	1207.5	1207.5
2.2	Սնունդ (35 մարդ x 3 օր x 5.0 հազ. դրամ)	հատ	1	525.0	525.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 2				**1732.5**
3	**Կազմակերպչական ծախսեր**				
	Սուրճի ընդմիջման ծառայություն (35 մարդ x 3 օր x 1.5 հազ. դրամ)	հատ	1	157.5	157.5
	ԸՆԴԱՄԵՆԸ 3				**157.5**
4	**Տրանսպորտային ծառայություններ (ուղևորափոխադրում, այց և վերադարձ)**				
	Կապան-Ստեփանավան-Կապան, Եղեգնաձոր-Ստեփանավան-Եղեգնաձոր, Գավառ-Ստեփանավան-Գավառ, Իջևան-Ստեփանավան-Իջևան, Վանաձոր-Ստեփանավան-Վանաձոր, Գյումրի-Ստեփանավան-Գյումրի	հատ	1	314.0	314.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 4				**314.0**
5	**Ծրագրային ծախսեր, այդ թվում՝**				
5.1	Մեդիա փորձագետի ծառայություն	հատ	2	150.0	300.0
5.2	Թարգմանչի ծառայություն՝ (գրավոր և բանավոր, հայերեն-ռուսերեն և հակառակը)	հատ	1	130.0	130.0
5.3	Ուսումնական տեսահոլավակի պատրաստման ծառայություն (15 րոպե)	հատ	1	260.0	260.0
5.4	Ծրագրի տեսանկարահանման և ամփոփիչ տեսաֆիլմի պատրաստման ծառայություն (15-20 րոպե)	հատ	1	200.0	200.0

5.5	Ծրագրի լոգոտիպով շապիկներ	հատ	35	3.8	133.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 5				**1023.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ				**3971.0**
	ԱԱՀ**				**794.2**
	ԱՄԲՈՂՋԸ				**4765.2**

* Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով

** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի
կենտրոն ՀԿ
Քաղ. Ստեփանավան, Եկեղեցի փ., N 24.
kamqlori@gmail.com
«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11808036948100, ՀՎՀՀ 06950266
Նախագահ՝ Ն. Ավագյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված 3
«05» «04» 2024 թ.
N ԵԴ-09- 2024 պայմանագրի

«ՀՀ մարզաբնակ ուսանողների մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր՝ ԱՊՀ երիտասարդների հետ համագործակցությամբ»
դրամաշնորհային ծրագիր

Տիտղոսաթերթ

Կազմակերպության անունը՝ «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» հասարակական կազմակերպություն
Հապավումը (եթե առկա է)՝ «ԿԱՄՔ» ՀԿ
Ծրագրի անվանումը՝ «ՀՀ մարզաբնակ ուսանողների մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր՝ ԱՊՀ երիտասարդների հետ համագործակցությամբ»
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի)[1] Ծրագրի սկիզբ՝ *15.04.2024թ.* Ծրագրի ավարտ՝ *30.11.2024թ.*
Ծրագրի իրականացման վայրը/ աշխարհագրությունը (մարզ, համայնք) ՀՀ սահմանամերձ մարզեր՝ Սյունիք, Վայոց Ձոր, Գեղարքունիք, Տավուշ, Լոռի, Շիրակ ԱՊՀ անդամ պետություններ
Կազմակերպության ղեկավար (անուն, հեռախոս, էլ. փոստ) Նազիկ Ավագյան, հեռ.՝ +374-93-405082, avagyannazeli@gmail.com
Ծրագրի ղեկավար/համակարգող (անուն, հեռախոս, էլ. փոստ) Պետրոս Պետրոսյան , հեռ.՝ +374-98-638305 , petrospet@mail.ru
Կազմակերպության գործունեության հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս և էլ.փոստ) ՀՀ , Լոռու մարզ, քաղաք Ստեփանավան, Եկեղեցի փողոց, N 24, հեռ.՝ +374-256-2-2721, kamqlori@gmail.com
Ծրագրի բյուջե (ՀՀ դրամ)[2]՝ 4765.2 (չորս միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար երկու հարյուր) հազ. դրամ

Համառոտագիր

ՀՀ մարզաբնակ ուսանողների մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր՝ ԱՊՀ երիտասարդների հետ համագործակցությամբ» յոթամսյա տևողությամբ ծրագիրն իրականացվելու է 15.04.2024թ.-30.11.2024թ.: Ծրագրի շահառու են լինելու 350 երիտասարդներ, որից 320-ը՝ ՀՀ սահմանամերձ մարզերից (Սյունիք, Վայոց Ձոր, Գեղարքունիք, Տավուշ, Լոռի և Շիրակ), 30-ը՝ ԱՊՀ անդամ պետություններից, քանի որ ինչպես ցույց են տալիս միջազգային ուսումնասիրությունները՝ կիբեռհանցագործությունները նվազեցնելու և մեդիագրագիտության ոլորտում նշանակալի ձեռքբերումներ ունենալու համար կարևոր է պետությունների՝ ինչպես իրավապահ մարմինների, այնպես էլ հասարակությունների միջև ակտիվ համագործակցությունը: «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ի կողմից ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ նախորդ տարի Լոռու մարզի ուսանողների համար իրականացված «Թվային միջավայրում պաշտպանված և մեդիագրագետ ուսանող» ծրագրին մասանկցության հայտ էին ներկայացրել բազմաթիվ այլ ուսանողներ ՀՀ տարբեր մարզերի բուհերից, ինչը թույլ է տալիս եզրահանգել, որ ՀՀ մարզաբնակ ուսանողները կարիք և ցանկություն ունեն ստանալու գիտելիքներ մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռանվտանգության վերաբերյալ:

Առաջարկվող ծրագրի նպատակն է՝ զարգացնել ՀՀ մարզերի բուհերում սովորող ծրագրի շահառու մարզաբնակ երիտասարդների կարողությունները մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության

---

[1] Ծրագրի մեկնարկը՝ 2024 թվականի բյուջետային տարվա երկրորդ եռամսյակ: Ծրագրի իրականացման և հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետը՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի առաջին տասնօրյակը:
2 Ծրագրի բյուջեով արգելվում են կապիտալ բնույթի ծախսերը:

ոլորտում նպաստելով թվային միջավայրում նրանց անվտանգ, ակտիվ և գրագետ գործունեությանը տեղեկատվության *հավաստիության ստուգումից մինչև պաշտպանվածություն տարաբնույթ կիբեռհանցագործություններից (ֆիշինգ, համակարգչային ծովահենություն, կեղծ առևտրային գործարքներ, դրամաշորթություն, կիբեռբուլինգ, պոռնոգրաֆիա, այդ թվում՝ մանկական և այլ վտանգավոր երևույթներ):* Ծրագրի նպատակն է նաև ՀՀ մարզերի բուհերի ուսանողների և ԱՊՀ երիտասարդների միջև համագործակցություն ձևավորելով՝ բարձրաձայնել տարածաշրջանում առավել տարածված մեդիամանիպուլյացիաներն ու կիբեռհանցագործության տեսակները՝ օգնելով միմյանց թվային արագ փոփոխվող աշխարհում ինքնուրույն կողմնորոշվելու, փաստերը, տվյալները քննադատաբար վերլուծելու, թվային միջավայրում առկա վտանգներից ու հանցագործություններից իրենց և հարազատներին պաշտպանելու:

Ծրագրի առաջին փուլում ՀՀ մարզերից 16-30 տարեկան 120 և ԱՊՀ երկրներից 30 ընտրված երիտասարդների համար կանցկացվեն մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության կարողությունների զարգացմանը միտված առցանց դասընթացներ, որի ընթացքում նրանք հաղորդակից կդառնան համացանցից ճիշտ օգտվելու կանոններին, կսովորեն քննադատաբար վերլուծել մեդիա հաղորդագրությունները, ստուգել փաստերն ու չտարածել կեղծ լուրեր, պաշտպանել անձնական տվյալները, չդառնալ տարատեսակ կիբեռհանցագործությունների ու թվային միջավայրին բնորոշ խարդավանքների զոհ: Հայ և ԱՊՀ երկրների երիտասարդները դասընթացից հետո կուսումնասիրեն իրենց տարածաշրջաններում՝ թվային միջավայրում իրենց առավել հաճախ հանդիպող կիբեռհանցագործությունների ու մեդիամանիպուլյացիաների դեպքերը/տեսակները և կպատրաստեն ամփոփ զեկույց-հոդվածներ, որոնք կներկայացնեն ծրագրի երկրորդ փուլի ընթացքում օնլայն-օֆլայն ձևաչափով կազմակերպված կոնֆերանսի ընթացքում՝ քննարկելով և բարձրաձայնելով ԱՊՀ երկրներում թվային միջավայրում տարածված կիբեռհանցանքները: Լավագույն զեկույց-հոդվածները կամփոփվեն և կհանրայնացվեն blogger.com, tilda կամ այլ համացանցային հարթակներում՝ հանրությանն իրազեկելով ծրագրի իրականացման ընթացքում ՀՀ մարզերում և ԱՊՀ երկրներում առավել հաճախ հանդիպած մեդիախարդավանքների ու կիբեռվտանգների մասին՝ դրանով իսկ նպաստելով կիբեռհանցագործությունների զոհերի թվի կրճատմանը ՀՀ մարզերում, ինչպես նաև ԱՊՀ անդամ պետություններում, քանզի պաշտպանված է նա, ով իրազեկված է: Հայ և այլազգի շահառուների մասնակցությամբ կպատրաստվի ուսուցողական-խորհրդատվական սոցիալական տեսահոլովակ (հայերեն լեզվով, ռուսերեն նշագրերով կամ հակառակը), որտեղ ծրագրի շահառու երիտասարդները կներկայացնեն իրենց ուսումնասիրությունների արդյունքում վերհանված կիբեռհանցագործությունների դեպքերից առավել ուշագրավները և կարևոր խորհուրդներ (մեսիջներ) կհղեն մարդկանց՝ ինչպես հնարավորինս պաշտպանվել թվային միջավայրում ապատեղեկատվության, մեդիամանիպուլյացիաների, կիբեռհանցագործների ու հաքերների զոհ չդառնալու համար: Տեսահոլովակը կտեղադրվի համացանցում և ծրագրի շահառուների միջոցով կտարածվի ՀՀ մարզերում ու ԱՊՀ անդամ պետություններում:

Ծրագրի երկրորդ փուլում առաջին փուլին հաջողությամբ մասնակցած ՀՀ մարզաբնակ ուսանողներից կընտրվեն լավագույն 30-ը, որոնք կվերապատրաստվեն որպես մեդիագրագիտության և թվային գրագիտության մարզային առաջնորդներ՝ մասնակցելով ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան գրոսաշրջային քաղաքում կազմակերպված «Մեդիագրագետ ուսանող» եռօրյա ամռային ճամբարի: Ճամբարի ընթացքում նրանք կմասնակցեն դասընթացների՝ խորացնելով գիտելիքներն ու հմտությունները մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության ուղղությամբ, ինչպես նաև ձեռք կբերեն վերոնշյալ թեմաներով դասընթացներ վարելու հմտություններ և մեթոդաբանություն: Ճամբարի ավարտին տեղի կունենա «Մեդիամարտ» ինտելեկտուալ միջմարզային խաղ-մրցույթ (ուսանողական բոեյն-ոինգ), որի ընթացքում ՀՀ մարզերի բուհերի ուսանողները կմրցեն միմյանց հետ, ինչպես նաև կամրապնդեն ծրագրի շրջանակում ստացած գիտելիքները: Առաջին երեք տեղերն զբաղեցրած թիմերը կպարգևատրվեն խրախուսական մրցանակներով: Այս կերպ ծրագիրը կնպաստի նաև ՀՀ մարզաբնակ ուսանողների ոչ ֆորմալ կրթությանը, հետաքրքիր և բովանդակալից ժամանցի կազմակերպմանն ու քննադատական մտածողության զարգացմանը, ՀՀ սահմանամերձ մարզերի բուհերի ուսանողների միջև ակտիվ համագործակցությանն ու առողջ մեդիա մրցակցությանը:

Ծրագրի երրորդ փուլում թվային գրագիտության մարզային առաջնորդներն իրենց մարզերի բուհերում կանցկացնեն մեդիագրագիտության տեղեկատվական արշավներ, սեմինար-հանդիպումներ՝ ստացած գիտելիքները տարածելով ծրագրի շահառու սահմանամերձ բուհերի ուսանողների շրջանում: Ծրագրի այս փուլին կներգրավվի առնվազն 200 ուսանող, այդպիսով՝ ծրագրի անմիջական շառուների թիվը կդառնա 350: Նկատի ունենալով, որ մարզերի բուհերում սովորում են տվյալ մարզի ինչպես մարզկենտրոնում, այնպես էլ տարբեր գյուղական և քաղաքային համայնքներում ապրող երիտասարդներ, ապա նրանց միջոցով մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության վերաբերյալ տեղեկատվությունը կտարածվի ՀՀ սահմանամերձ մարզերի բնակչության շրջանում: Տեղի կունենա ծրագրի արդյունքների բազմապատկում և շղթայական փոխանցում հասարակության լայն շերտերին, ինչն էլ ծրագրի երկարաժամկետ արդյունքում կնպաստի շահառու մարզերի ուսանողության և տարբեր համայնքների բնակչության շրջանում մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության մակարդակի բարձրացմանը, նրանց գրագետ, իրազեկ ու պաշտպանված գործունեությանը թվային միջավայրում, ինչն էլ իր հերթին կնվազեցնի կիբեռհանցագործությունների ենթարկման մակարդակը ծրագրի թիրախ ընտրված ՀՀ սահմանամերձ մարզերում:

Առաջարկվող նախագիծը հնարավորություն կտա նաև համախմբել ԱՀ մարզերի, ինչպես նաև ԱՊՀ երկրների՝ մեդիագրագրագիտությամբ հետաքրքրված երիտասարդների ներուժը, ովքեր կմիավորվեն «ԱՊՀ մեդիագրագետ երիտասարդներ» ֆեյսբուքյան հարթակում՝ ծրագրի ավարտից հետո ևս շարունակելով համագործակցությունը, բարձրաձայնելով թվային միջավայրում հանդիպող նորանոր վտանգների ու դեպքերի մասին, օգնելով միմյանց տարբերել հավաստի ու կեղծ տեղեկությունները, պաշտպանելով միմյանց ու հանրությանը թվային միջավայրում օրեցօր ավելացող խարդախություններից, կիբեռհանցանքներից ու ապատեղեկատվական քարոզներից, անհրաժեշտության դեպքում համախմբվելով ու պայքարելով տեղեկատվական պատերազմներում, մեդիամարտերում...

Ծրագրի տեսանելիությունն ապահովելու նպատակով նախագծի ամբողջ ընթացքը կտեսանկարահանվի և կպատրաստվի ծրագրի մասին ամփոփիչ տեսաֆիլմ:

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում

Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ ծրագիրը:

Ժամանակակից աշխարհում հասարակության զարգացումն առանց համացանցի, համակարգչային սարքավորումների անհնարին է դարձել: Մարդիկ, հատկապես երիտասարդները ժամանակի մեծ մասն անց են կացնում թվային միջավայրում՝ տեղեկատվության ստացում և փոխանցում, սոցիալական շփումներ, էլեկտրոնային առևտուր, առցանց կրթություն և ժամանց, դրամական փոխանցումներ..., և այս ամենը համացանցի միջոցով: Մարդու գործունեության բոլոր բնագավառներում համացանցի ու համակարգչային սարքավորումների առկայության հիմնական պատճառը հարմարավետությունն ու մատչելիությունն են, արագ հասանելիությունը:

Ինտերնետի հսկայական հնարավորությունների աճին զուգահեռ ամբողջ աշխարհում և Հայաստանում տարեցտարի աճում են կիբեռհանցագործությունների ու մեդիամանիպուլյացիաների թիվն ու տեսակները. ավանդական մեդիատեռորների ու կիբեռհանցագործություններին զուգահեռ՝ ի հայտ են գալիս հասարակությանն անհայտ և հանրորեն վտանգավոր նորանոր արարքներ, որոնց զոհ են դառնում հազարավոր մարդիկ: Արդյունքում շատ երիտասարդներ դառնում են թվային միջավայրում առկա ամենատարբեր մեդիա մանիպուլյացիաների և կիբեռհանցագործությունների զոհ՝ ֆիշինգ, պռոնոգրաֆիա, այդ թվում՝ մանկական պռոնոգրաֆիա, վիշինգ, անձնական տվյալների գողություն, անօրինական կամ արգելված տեղեկատվության տարածում, համակարգչային ծովահենություն, կիբեռբուլինգ և այլն.... Ըստ միջազգային ուսումնասիրությունների՝ աշխարհում տարաբնույթ կիբեռհանցագործություններից ամեն վայրկյան տուժում է 14 չափահաս:

Ըստ «Կիբեռհանցագործությունների մասին» Բուդապեշտի Կոնվենցիայի՝ կիբեռհանցագործությունները բաժանվում են 3 հիմնական խմբի. առաջինը՝ ֆինանսական կիբեռհանցագործություններ *(համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակությունը)*, երկրորդը՝ համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ (*հաքերային հարձակումներ, տարբեր սոցցանցերի օգտահաշիվների ապօրինի տիրանալու դեպքեր և այլն*), երրորդը՝ այլ (*համակարգչային համակարգերի միջոցով մանկական պռոնոգրաֆիայի ներկայացնելը և պահպանելը, հեղինակային և հարակից իրավունքները խախտելը, անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը, գաղտնիք պարունակող տեղեկությունների տարածումը*): Հայաստանում հանդիպում են բոլոր 3 տիպի կիբեռհանցագործությունների տեսակները, սակայն գերակշռողը ֆինասնական բնույթի կիբեռհանցագործություններն են: Ըստ միջազգային վերլուծությունների՝ Հայաստանի Հանրապետությունում կիբեռհանցագործությունների իրական թիվը կարող է հասնել տարեկան շուրջ 40.000-ի: Նախորդ տարի Հայաստանում հարուցվել է կիբեռհանցագործությունների վերաբերող 641 քրեական վարույթ, որոնց 67,2%-ը քննվել է ֆինանսական դեպքերով: Հարուցված քրեական վարույթների ընդհանուր թվից միայն 14-ն է մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան: Հանցագործությունների ստվերում գտնվելը, դրանց մասին չբարձրաձայնելը և իրավապահ մարմիններին չհայտնելը, նպաստում է թվային միջավայրում հանցավորության բարենպաստ պայմանների ստեղծմանը: Հայաստանի Հանրապետությունում թվային միջավայրում արձանագրվող հանցագործությունները կատարվում են ինչպես երկրի ներսում, այնպես էլ՝ մեր երկրից դուրս: Երկրի ներսում կատարվող կիբեռհանցագործությունները հիմնականում կատարվում են ֆինանսական ոլորտում կամ էլ անձնական տարբեր շարժառիթներով, իսկ երկրից դուրս առավել հաճախ կատարվում են հաքերային հարձակումներ, ինչպես նաև համակարգչային համակարգերն արգելափակող վիրուսներով դրամաշորթող հանցագործություններ:

Վերջին տարիներին համացանցն օգտագործվում է ոչ միայն քրեորեն պատժելի առանձին հանցանքների, այլև ծայրահեղ վտանգ ներկայացնող միջազգային բնույթի արարքների կատարման նպատակով, մասնավորապես՝ «ցանցային/մեդիա պատերազմ», «կիբեռտեռորիզմ» և այլն, որոնք սպառնալիք են ստեղծում ինչպես առանձին

պետությունների անվտանգության, այնպես էլ ողջ միջազգային հանրության համար: Կիբեռհանցագործության և մեդիամանիպուլյացիաների դեմ պայքարը վաղուց արդեն դուրս է եկել ազգային, ներպետական շրջանակներից՝ դառնալով միջազգային հանրության մտահոգության առարկա: Թվային, միջավայրում հանդիպող հանցագործությունների դեմ պայքարում են ոչ միայն առանձին պետությունների իրավապահ կամ այլ իրավասու մարմիններ, այլև միջազգային տարբեր կազմակերպություններ: Խնդիրն իր բարդությամբ և լրջությամբ այնքան է արդիականացել, որ առանց տարբեր պետությունների միջև համագործակցության գործնականում անհնար է դարձել կիբեռհանցագործության դեմ պայքարում հասնել նշանակալի արդյունքների:

Ինչպես ընդունված է ասել՝ կիբեռհանցավորությունը սահմաններ չունի: Համացանցում վայրկյանների ընթացքում կատարված գործողության վերաբերյալ ապացուցողական տվյալներ ստանալու համար երբեմն պետք է հարցումներ կատարել մի քանի պետությունների իրավասու մարմինների: Օրինակ, տուժողը կարող է գտնվել մի երկրում, հանցավորը՝ մեկ այլ, ինտերնետային ծառայություն մատուցող ընկերությունը՝ երրորդ, իսկ պահվող տվյալները՝ չորրորդ երկրում: Եվ այսպես կիբեռհանցագործությունների թիվը ողջ աշխարհում տարեցտարի աճում է, իսկ դրանց բացահայտման մակարդակը շարունակում է ցածր մնալ՝ առավելագույնը 5%: «Կիբեռհանցագործությունների մասին» Բուդապեշտի Կոնվենցիայի Կոմիտեի նախագահի գնահատմամբ՝ իրավապահ մարմինների կողմից արձանագրվում է թվային միջավայրում իրականացված հանցագործությունների միայն 0.1-1%-ը, իսկ բացահայտվում է արձանագրված դեպքերի 1-10%-ը: Դա նշանակում է, որ պայմանական 10.000 հանցագործության դեպքերից իրավապահ մարմիններին հայտնի է դառնում միայն 100-ից 10 դեպք, որոնցից բացահայտվում է միայն 10-ից 1-ը: Ներկայացված միջազգային այս վիճակագրությունը վկայում է, որ թվային միջավայրում հանցագործությունների իրական թիվը էականորեն գերազանցում է արձանագրված բոլոր այլ հանցագործությունների թիվը միասին վերցված:

Պետք է արձանագրել, որ կիբեռհանցագործությունների թիվը նվազում է այն պետություններում ու հասարակություններում, որտեղ իրավապահ համակարգն ի զորու է հակազդել այդ հանցագործություններին: Եվ հակառակը, հանցագործները թիրախավորում են այն պետություններն ու հասարակությունը, որտեղ այդ համակարգը արդյունավետ չի գործում: Կարևոր նշանակություն ունի նաև հասարակության մեդիագրագիտությունն ու կիբեռհիգիենայի պահպանումը: Այն պետություններում, որտեղ բարձր է մեդիագրագիտության մակարդակը և կա վստահություն իրավապահ մարմինների նկատմամբ, այնտեղ մարդիկ, ավելի զգոն լինելով կիբեռվտանգների հանդեպ, դեպքերի կատարման պարագայում չեն երկմտում և անմիջապես դիմում են իրավապահ մարմիններին, տրամադրում են հանցագործությունների բացահայտման համար անհրաժեշտ տվյալներ: Արդյունքում կրճատվում է թե՛ դեպքերի թիվը, և թե՛ ավելի բարձր են հանցագործությունների բացահայտման ցուցանիշները:

Անդրադառնալով մեր պետությանը՝ կարող ենք արձանագրել, որ վերջին տարիներին արձանագրվել է դեպքերի եռակի աճ, ինչը վկայում է ոչ միայն այն մասին, որ վերջին տարիներին կատարվել է երեք անգամ ավելի շատ հանցագործություն, այլ նշանակում է, որ աստիճանաբար բարձրանում է հասարակության մեդիագրագիտությունը և մեծանում է վստահությունն իրավապահ համակարգի նկատմամբ, ինչի արդյունքում հանցագործություններից տուժած անձինք ավելի հաճախ են դիմում իրավապահ մարմիններին: Այսինքն, հանցագործությունների բացահայտման աճը հանգեցնում է նրան, որ քաղաքացիները ավելի հաճախ են դիմում իրավապահ մարմիններին: Վերջին 2 տարիներին ունենք կիբեռհանցագործությունների բացահայտման շեշտակի աճ: Հայաստանի Հանրապետությունում կատարված ֆինանսական կիբեռհանցագործությունների բացահայտումը կազմում է շուրջ 80%: Որպեսզի կիբեռհանցագործությունների բացահայտման և թվային միջավայրում հանդիպող խարդավանքների ուղղությամբ ունենանք շարունակական առաջընթաց, ընդհանուր իրավիճակի կայուն բարելավում, պետք է ավելի հաճախ խոսել կիբեռվտանգների մասին, հասարակության տարբեր խմբերում իրականացնել մեդիագրագիտության իրազեկման արշավներ: ԶԼՄ-ներն էլ այս առումով ունեն կարևոր առաքելություն:

Գրագետ մեդիա սպառող լինելն առավել կարևոր է հատկապես հակամարտությունների մեջ գտնվող երկրներում, մեր դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում, որտեղ մեդիան, որպես հզոր զենք, հակառակորդի կողմից կիրառվում է ապատեղեկատվություն տարածելու և զանազան կիբեռհանցագործությունների նպատակով. աղբբեջանական հաքերներն ու կիբեռհանցագործները ջանք ու եռնադ չեն խնայում հայկական կայքերը, հայ օգտատերերի սոցիալական ցանցերի էջերը ջարդելու և տվյալները գողանալու համար: Իսկ մյուս կողմից, թշնամական կայքերի կողմից ապատեղեկատվության տարածումն առաջացնում է տագնապի և խուճապի մթնոլորտ՝ այսպես ասած «ջուր լցնելով թշնամու ջրաղացին»: Ուստի թվային մեդիա միջավայրում գրագետ ու պաշտպանված լինելը, այսպես ասած՝ դարի հրամայականն ու ժամանակի պահանջն է: Ամենապարզ ուղին սովորելն է՝ ինչպես պաշտպանվել առցանց տիրույթում և ինչպես չլինել կիբեռհանցագործության զոհ:

Թվային միջավայրում հանցագործությունների դեպքերը կարող են նվազել միայն այն դեպքում, եթե քաղաքացիները լինեն ավելի իրազեկ, մեդիագրագետ և ուշադիր: Վիրտուալ հանցագործները գործում են այնտեղ, որտեղ հնարավորություն են տեսնում հաջողություններ գրանցելու: Մենք՝ քաղաքացիներս, լինելով ավելի մեդիագրագետ, չպետք է հնարավորություն տանք հանցագործներին դարձնել մեզ տուժողներ: Դա պետք է լինի

յուրաքանչյուրիս պայքարը: Այսօր յուրաքանչյուր մարդ պետք է ունենա որոշակի գիտելիքներ՝ թվային աշխարհի տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու համար:

«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ն, կարևորելով երիտասարդների իրազեկ և պաշտպանված լինելը թվային միջավայրում, 2023թ.-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Լոռու մարզկենտրոն Վանաձորում իրականացրել է «Թվային միջավայրում պաշտպանված և մեդիագրագետ ուսանող» նախագիծը, որին մասնակցել են Լոռու մարզկենտրոնի բուհերում սովորող ավելի քան հարյուր երիտասարդներ՝ մասնակցելով մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգարգիտության կարողությունների զարգացման դասընթացների և «Մեդիամարտ» ինտելեկտուալ մրցույթ-խաղի: Հենց այդ ծրագրի իրականացման և ծրագրի ազդեցության ընթացիկ և վերջնական գնահատման ընթացքում «ԿԱՄՔ» ՀԿ-ի աշխատակազմը հասկացավ, որ իրականացվող ծրագիրը մեծ պահանջարկ ունի ոչ միայն Լոռու մարզի ուսանողների շրջանում: «Թվային միջավայրում պաշտպանված և մեդիագրագետ ուսանող» ծրագրի հայտարարությունը տարածելիս՝ ծրագրին մասնակցության հայտ էին ներկայացրել մեծ թվով այլ ուսանողներ Տավուշի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի մարզերի տարբեր բուհերից՝ հաշվի չառնելով, որ ծրագրի շահառու կարող են լինել միայն Լոռու մարզի բուհերի ուսանողները: Այս հանգամանքը թույլ տվեց մեզ եզրահանգել, որ ՀՀ մյուս մարզերում (հատկապես սահմաներձ մարզերում) ապրող և սովորող երիտասարդները ևս կարիք ունեն ձեռք բերելու մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ գիտելիքներ:

Հաշվի առնելով այս ամենը, նաև ձգտելով ապահովել ՀԿ-ի կողմից իրականացված նախորդ ծրագրի շարունակականությունն ու ընդլայնելու աշխարհագրությունը՝ «ԿԱՄՔ» ՀԿ-ն հանդես է գալիս **«ՀՀ մարզաբնակ ուսանողների մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր՝ ԱՊՀ երիտասարդների հետ համագործակցությամբ»** ծրագրային առաջարկով՝ նպատակ ունենալով բարձրացնել ՀՀ մարզերի բուհերի ուսանողների շրջանում մեդիագրագիտության, թվային գրագիտության մակարդակը և պաշտպանվածությունը կիբեռհանցագործություններից՝ զարգացնելով ծրագրի շահառու երիտասարդների կարողությունները վերոնշյալ ուղղություններով, ինչպես նաև ուսումնասիրելով ու բարձրաձայնելով ՀՀ մարզերի և ԱՊՀ երկրների երիտասարդների շրջանում թվային միջավայրում առավել տարածված հանցագործությունները, մեդիամանիպուլյացիաներն ու կիբեռվտանգները: Ծրագրի անմիջական շահառու երիտասարդների միջոցով թվային գրագիտության էթիկան ու կիբեռհիգիենան կտարածվի ծրագրի թիրախ ընտրված սահմանամերձ մարզերի տարբեր բնակավայրերում, քանի որ մարզերի բուհերում սովորում են տվյալ մարզի քաղաքային և գյուղական տարբեր համայնքների երիտասարդներ: Արդյունքում ծրագրի շահառու ՀՀ մարզերի բուհերում սովորող երիտասարդների շրջանում և նրանց միջոցով ծրագրի շահառու մարզերի տարբեր համայնքներում կբարձրանա մեդիագրագիտության և թվային միջավայրում անվտանգ ու գրագետ գործունեության մակարդակը, կնվազի կիբեռհանցագործությունների զոհերի թիվը:

Կազմակերպության փորձառությունը

Ներկայացրեք կազմակերպության առաքելությունը և նպատակները, ինչպես նաև նշված ոլորտում իրականացված ծրագրերը (ժամանակահատված, դրամաշնորհատու կազմակերպություն, բյուջե, նպատակ, արդյունքներ):

«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ն համայնքային-քաղաքացիական նախաձեռնությունից հասարակական կազմակերպության է վերածվել 2015թ. մայիսի 12-ին՝ ստանալով պետական գրանցում: Մինչ այդ նախաձեռնության անդամների ջանքերով կյանքի է կոչվել «Դարձնենք Ստեփանավանը երիտասարդական մայրաքաղաք» նախաձեռնությունը, որի արդյունքում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթում հաղթող է ճանաչվել Լոռու մարզի Ստեփանավան քաղաքը: 2015թ. ընթացքում «ԿԱՄՔ» ՀԿ-ն ընդգրկված է եղել **«Ստեփանավանը տարվա երիտասարդական մայրաքաղաք» ծրագրով** նախատեսված գրեթե բոլոր միջոցառումների կազմակերպչական աշխատանքներում՝ տարեվերջին արժանանալով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի և Ստեփանավանի քաղաքապետի պատվոգրերին, նախարարության կողմից ճանաչվել 2015թ. լավագույն նորաստեղծ երիտասարդական հասարակական կազմակերպություն:

«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ի **առաքելությունն է՝** նպաստել երիտասարդների դերի բարձացմանը, նրանց ներգրավմանը երկրի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային, ինչպես նաև թվային ոլորտներում:

Կազմակերպության գործունեության կանոնադրական նպատակներն ու խնդիրներն են՝

- ✓ օժանդակել ՀՀ-ում համամարդկային արժեքների տարածմանը՝ մարդու իրավունքների պաշտպանությանը, ժողովրդավարության ամրապնդմանը և սեռային իրավահավասարության խնդիրների լուծմանը,
- ✓ նպաստել կոնֆլիկտների լուծմանը և խաղաղության կառուցմանը,

- ✓ նպաստել հանդուրժողականության մթնոլորտի տարածմանը, հանրապետությունում և ամբողջ աշխարհում,
- ✓ համագործակցել ազգային փոքրամասնությունների, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ,
- ✓ նպաստել, ինչպես նաև գործուն մասնակցություն ցուցաբերել ՀՀ հասարակական կյանքին,
- ✓ **նպաստել ՀՀ երիտասարդության առջև ծառացած խնդիրների լուծմանը և իրավագիտակցության բարձրացմանը,**
- ✓ նպաստել երիտասարդության զբաղվածության, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը,
- ✓ նպաստել առողջ ապրելակերպի, վերարտադրողական առողջությանը նվիրված ծրագրերին,
- ✓ նպաստել երիտասարության մշակութային կյանքի մասնակցությանն ու զարգացմանը,
- ✓ խթանել կամավորական աշխատանքի կայացմանը,
- ✓ **նպաստել խոսքի ազատությանը և երիտասարդների ներգրավմանը լրատվական գործունեության մեջ, նրանց մեդիամասնակցությանն ու մեդիագրագիտությանը,**
- ✓ **նպաստել մեդիա ակումբների զարգացմանը,**
- ✓ մշակել և իրականացնել կանանց և երեխաների, երիտասարդների և սոցիալապես անապահով ընտանիքների շրջանում ծրագրեր և միջոցառումներ:
- ✓ իրականացնել երիտասարդների հայրենասիրական, հոգևոր և ֆիզիկական դաստիարակությանն ուղղված ծրագրեր,
- ✓ կազմակերպել և իրականացնել իրավական, սոցիալական, գիտական, կրթական, հայրենասիրական, մշակութային, տեղեկատվական, հետազոտական, խորհրդատվական և այլ հասարակական նշանակություն ունեցող ծրագրեր ու միջոցառումներ:

Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, ՀՀ-ում գրանցված այլ կազմակերպությունների հետ՝ ՀՀ տարբեր համայնքներում իրականացնելով տարաբնույթ ծրագրեր՝ ուղղված երիտասարդների դերի բարձրացմանը, զբաղվածության խնդրի մեղմացմանը, երիտասարդների ակտիվ մասնակցությանը համայնքային կյանքին ու տեղական ինքնակառավարմանը, երկրի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային գործընթացներին: «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն»-ի իրականացված ծրագրերին կարող եք ծանոթանալ ՀԿ-ի բլոգում՝ kamqngo.blogspot.com և ֆեյսբուքյան էջում՝ https://www.facebook.com/KAMQNGO :

Առաջարկվող ծրագիրը համապատասխանում է ՀԿ-ի առաքելությանն ու կանոնադրական նպատակներին և ՀԿ-ի համար ունի ռազմավարական նշանակություն: Մեդիամասնակցության և մեդիագրագիտության, երիտասարդների մեդիա կրթության ուղղությամբ ՀԿ-ի իրականացրած ծրագրերից են՝

«Երիտասարդների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը նոր մեդիայի միջոցով» ծրագիրն իրականացվել է ՀՀ 2017թ. տարվա երիտասարդական մայրաքաղաք **Չարենցավանում՝ 10.04.2017թ.-10.06.2017թ.** ընկած ժամանակահատվածում **ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության** կողմից հատկացված դրամաշնորհի աջակցությամբ, որի **բյուջեն կազմել է 1994250** (մեկ միլիոն ինը հարյուր իննսունչորս հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Ծրագրի նպատակն էր՝ նպաստել չարենցավանցի 25 երիտասարդի անհատական և սոցիալական զարգացմանը, մասնակցային կառավարման և մեդիագրագիտության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և նոր մեդիայի վերաբերյալ գիտելիքներ ու հմտություններ փոխանցելու միջոցով նրանց ներգրավվածությանը համայնքային կյանքին ու տեղական ինքնակառավարմանը: Ծրագրի շրջանակում անցկացված դասընթացների **արդյունքում** չարենցավանցի 25 երիտասարդ ձեռք է բերել քաղաքացիական լրագրողի հմտություններ, զարգացել մեդիագրագիտության կարողություններ, սովորել բացել և վարել բլոգ, տարբերակել հավաստի տեղեկատվությունը կեղծից, իրազեկվել ՏԻՄ գործառույթների և տեղական ինքնակառավարմանը մեդիայի միջոցով մասնակցության հնարավորություններին: Ծրագրի արդյունքում շահառուների և Չարենցավանի ՏԻՄ-երի միջև ստեղծվել է երկխոսության հարթակ, շահառու երիտասարդները հանդիպել և հարցազրույցներ են վարել ՏԻՄ-երի հետ համայնքային խնդիրների վերաբերյալ, քննարկել դրանց լուծման ուղիները, ապա ծրագրի արդյունքում բացված մեդիա բլոգներում հանրայնացրել դրանք, լուսաբանել համայնքային կյանքն ու խնդիրները: Բլոգներից մի քանիսը ցայսօր շարունակում են իրենց գործունեությունը:

Քանի որ երիտասարդների մեդիագրագիտության, մեդիամասնակցության, նախաձեռնողականությանը միտված ծրագրերը ՀԿ-ի համար ունեն ռազմավարական նշանակություն, կազմակերպությունը նման ծրագրեր (նույն նպատակներով և համանման արդյունքներով) իրականացրել է

նաև ՀՀ երիտասարդական մյուս մայրաքաղաքներում նպաստելով թիրախ համայնքներում երիտասարդների մեդիագրագիտությանը, մեդիակրթությանը, նրաց ակտիվությանը, ներգրավմանը համայնքային կյանքին և որոշումների կայացման գործընթացներին նոր մեդիայի միջոցով: Այդ ծրագրերից են՝

«Մեդիա մասնակցություն» ծրագիր, 2018թ.Իջևան, դրամաշնորհի բյուջեն՝1.998.250 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունութ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Ծրագրի մասին պատմող տեսանյութի հղում՝ https://www.youtube.com/watch?v=mGZ4kzcJcWc&t=917s

«Մեդիան համայնքի մասնակցային կառավարման միջոց» ծրագիր, 2019թ., Վանաձոր, բյուջեն, 1.998.350 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունութ հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Ծրագրի մասին պատմող տեսանյութի հղում՝ https://www.youtube.com/watch?v=2SWLCtDQjH4&t=3s

«Գյումրեցի երիտասարդների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը նոր մեդիայի միջոցով» ծրագիր, 2016թ., Գյումրի, դրամաշնորհի բյուջեն՝ 1.999.250 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունինը հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Ծրագրի մասին պատմող տեսանյութի հղում՝ https://www.youtube.com/watch?v=6sbg4FkNRq8&t=4s

«Եղի՛ր զրագետ և պաշտպանված թվային միջավայրում» մեդիագրագիտության, թվային զրագիտության և կիբերզարգիտության կարողությունների զարգացման ծրագիր լոռեցի երիտասարդների համար» ծրագիր, 2022թ. Լոռու մարզ, Ստեփանավան, Գյուլագարակ և Լոռի Բերդ խոշորացված համայնքներ, դրամաշնորհի բյուջեն՝ 2.329.200 (երկու միլիոն երեք հարյուր քսանինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ծրագրի արդյունքում թիրախ համայնքներից ընտրված 30 երիտասարդներ զարգացրել են իրենց կարողությունները մեդիագրագիտության, թվային զրագիտության և կիբերզրագիտության ոլորտում, նրանցից 6-ը ընտրվել և վերապատրաստվել են որպես թվային զրագիտության համայնքային առաջնորդներ և իրենց համայնքներում՝ 13-18 տարեկան դպրոցահասակների շրջանում, անցկացրել իրազեկման արշավներ, տեղեկատվական սեմինար-հանդիպումներ, որոնց նախատեսված 300-ի փոխարեն մասնակցել է շուրջ 500 դպրոցական: Թիրախ համայնքների դպրոցներում անց է կացվել շարադրությունների և գեղանկարների մրցույթ, ծրագրի շահառուների մասնակցությամբ պատրաստվել է սոցիալական-տեղեկատվական կրթական տեսահոլովակ (տեսահոլովակի հղումը՝ https://www.youtube.com/watch?v=uyO9B4vMT88): Ծրագրի մասին պատմող ամփոփիչ տեսաֆիլմ՝ https://www.youtube.com/watch?v=dm2uqqp84Mc&t=4s

Ուրախությամբ ուզում ենք նշել, որ ծրագրի ավարտից երկու տարի անց ծրագրի արդյունքներն ու ձեռքբերումները շարունակվում են: Ներկայացնենք «հաջողության պատմություններից» մեկը. Ստեփանավան համայնքի թվի վեց դպրոցի ծրագրի շահառու երիտասարդների նախաձեռնությամբ դպրոցում բացվել է Մեդիա ակումբ, ծրագրի շահառուներից դպրոցի աշակերտներ Անի Սաքանյանն ու Միքայել Մարտիրոսյանը ստացած գիտելիքներն ու հմտությունները փոխանցում են դասընկերներին, դպրոցի աշակերտներին և ուսուցիչներին՝ պարբերաբար կազմակերպելով մեդիագրագիտության, թվային զրագիտության և կիբեռ զրագիտության վերաբերյալ սեմինարներ, տեղեկատվական հանդիպումներ: Դպրոցի Մեդիա ակումբի անդամները հաջողությամբ մասնակցել են նաև Ես մեդիագրագետ եմ նախագծին, ունեցել ձեռքբերումներ, որից հետո դպրոցի փոխտնօրենը կապ էր հաստատել ԿԱՄՔ ՀԿ-ի հետ՝ շնորհակալություն հայտնել և նշել, որ իրենց աշակերտների ձեռքբերումները մեդիագրագիտության ոլորտում նախ և առաջ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ ԿԱՄՔ ՀԿ-ի իրականացրած «Եղի՛ր զրագետ և պաշտպանված թվային միջավայրում» ծրագրի արդյունքն է:

Կից ներկայացնում ենք ծրագրի շահառու երիտասարդների՝ ծրագրի ավարտից մեկուկես տարի անց պատրաստված տեսանյութ՝ https://www.facebook.com/miqo.miqayel.9/videos/1412165576316958

2023թ.-ին «ԿԱՄՔ» ՀԿ-ն ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ իրականացրել է **«Թվային միջավայրում պաշտպանված և մեդիագրագետ ուսանող»** մեդիագրագիտության, թվային զրագիտության և **կիբերզրագիտության կարողությունների զարգացման ծրագիր Լոռու մարզկենտրոնի բուհերում սովորող երիտասարդների համար» նախագիծը** (բյուջեն՝ 2.421.500 երկու միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ) , որի շրջանակում Լոռու մարզի տարբեր համայնքներից մարզկենտրոնի բուհերում սովորող 16-30 տարեկան 100 երիտասարդ կրթության ֆորմալ և ոչ ֆորմալ մեթոդների, ինտերակտիվ մեդիա խաղերի համադրմամբ զարգացրել են իրենց կարողությունները մեդիագրագիտության, թվային զրագիտության և կիբերզրագիտության ուղղությամբ, հաղորդակից դարձել համացանցից ճիշտ օգտվելու կանոններին, սովորել քննադատաբար վերլուծել մեդիա հաղորդագրությունները, ստուգել փաստերն ու չտարածել կեղծ լուրեր, պաշտպանել անձնական տվյալները, չդառնալ տարատեսակ կիբեռհանցագործությունների ու թվային միջավայրին բնորոշ խարդավանքների զոհ: Ծրագրի երկրորդ փուլում թիրախ բուհերում անց է կացվել «Մեդիան և մենք. անվտանգ թվային միջավայր» խորագրով ստեղծագործական շարադրությունների, գեղարվեստական նկարների մրցույթ՝ նպաստելով թեմայի վերաբերյալ լոռեցի ուսանողների շրջանում քննադատական մտածողության և ստեղծագործական երևակայության զարգացմանը, իսկ ծրագրի երրորդ փուլում ուսանողները մասնակցել են «Մեդիամարտ» ինտելեկտուալ միջբուհական խաղ-մրցույթի (բրեյնինգ)՝ ամրապնդելով իրենց գիտելիքներն ու մրցակցելով միմյանց հետ: Ծրագրի շրջանակում բուհերից ընտրված ծրագրի անմիջական շահառու ուսանողների մասնակցությամբ պատրաստվել է «Մենք և մեդիան. անվտանգ թվային միջավայր» խորագրով

խորհրդատվական-ուսուցողական տեսահոլովակ, որի միջոցով շահառու երիտասարդները կիսվել են դասընթացի արդյունքում ստացած իրենց գիտելիքներով և համացանցից անվտանգ օգտվելու վերաբերյալ ուղերձներ հղել հասարակությանը, տեսահոլովակի հղումը՝ https://www.youtube.com/watch?v=KZJ8CpcI-W4 : Ծրագրի ընթացքը ներկայացնող ամփոփիչ տեսաֆիլմը կարող եք դիտել այս հղումով՝ https://www.youtube.com/watch?v=D9IMsxs9IZw :

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Համառոտ կերպով նկարագրել՝ որն է ծրագրի նպատակը և ինչ արդյունքներ են ակնկալվում ծրագրի ավարտին:

Ծրագրի նպատակն է՝ զարգացնել ՀՀ մարզերի բուհերում սովորող ծրագրի շահառու մարզաբնակ երիտասարդների կարողությունները մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության ոլորտում՝ նպաստելով թվային միջավայրում նրանց անվտանգ, ակտիվ և գրագետ գործունեությանը՝ տեղեկատվության հավաստիության ստուգումից մինչև պաշտպանվածություն տարաբնույթ կիբեռհանցագործություններից (*ֆիշինգ, համակարգչային ծովահենություն, կեղծ առևտրային գործարքներ, դրամաշորթություն, կիբեռբուլինգ, պոռնոգրաֆիա, այդ թվում՝ մանկական և այլ վտանգավոր երևույթներ*): **Ծրագրի նպատակն է նաև** ՀՀ մարզերի բուհերի ուսանողների և ԱՊՀ երիտասարդների միջև համագործակցություն ձևավորելով՝ բարձրաձայնել տարածաշրջանում առավել տարածված մեդիամանիպուլյացիաներն ու կիբեռհանցագործության տեսակները՝ օգնելով միմյանց թվային արագ փոփոխվող աշխարհում ինքնուրույն կողմնորոշվելու, փաստերը, տվյալները քննադատաբար վերլուծելու, թվային միջավայրում առկա վտանգերից ու հանցագործություններից իրենց և հարազատներին պաշտպանելու:

Ծրագիրը կնպաստի նաև ՀՀ մարզաբնակ ուսանողների ոչ ֆորմալ կրթությանը, հետաքրքիր և բովանդակալից ժամանցի կազմակերպմանն ու քննադատական մտածողության զարգացմանը, ՀՀ սահմանամերձ մարզերի բուհերի ուսանողների միջև ակտիվ համագործակցությանն ու առողջ մեդիա մրցակցությանը:

Ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված խնդիրներն են՝

ԽՆԴԻՐ 1- Բացահայտել ՀՀ սահմանամերձ մարզերի (Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ, Գեղարքունիք, Լոռի, Շիրակ) բուհերից առնվազն 120 ուսանողի և ԱՊՀ անդամ պետություններից ընդհանուր 30 երիտասարդի, որոնք ակտիվ են թվային միջավայրում, հետաքրքրված են տարածաշրջանում կիբերահանցագործությունների նվազեցմամբ և մեդիագրագիտության մակարդակի բարձրացմամբ: Նրանց համար կազմակերպել մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության առանցքային հարցերի վերաբերյալ կարողությունների զարգացման առցանց դասընթացներ, զարգացնել քննադատական մտածողությունն ու թվային միջավայրում փաստերի ստուգման ունակությունները: *(Հորսժամյա տևողությամբ առցանց դասընթացներ՝ 15-20 բոպե ընդմիջումով՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, 150 մասնակից, որից 120-ը ՀՀ մարզերից, 30-ը՝ ԱՊՀ երկրներից: Յուրաքանչյուր դասընթացի կներգրավվի մինչև 30 մասնակից՝ավելի արդյունավետ իրականացնելու համար, կկազմակերպվի ընդհանուր 5-7 առցանց դասընթաց՝ կախված մասնակիցների ժամային գրաֆիկից ու մասնակցության ընդգրկվածությունից):*

ԽՆԴԻՐ 2 Առցանց դասընթացներին մասնակցած ՀՀ մարզաբնակ ուսանողներից ընտրել և վերապատրաստել մեդիագրագիտության և թվային գրագիտության մարզային առաջնորդներ (յուրաքանչյուր մարզից առնվազն 5 ուսանող, ընդհանուր 30)՝ կազմակերպելով «Մեդիագրագետ ուսանող» ամառային եռօրյա ճամբար: (*Ճամբարը կներառի մեդիագրագիտության և թվային գրագիտության վերաբերյալ խորացված դասընթացներ և դասավանդման մեթոդաբանություն (3 օր), տարածաշրջանում թվային միջավայրում առավել տարածված կիբեռհանցագործությունների վերաբերյալ 1 առցանց կոնֆերանս-քննարկում ԱՊՀ անդամ երկրների՝ ծրագրի շահառու երիտասարդների հետ, շահառուների մասնակցությամբ թվային միջավայրում անվտանգ լինելու վերաբերյալ ուսումնական 1 տեսաֆիլմի պատրաստում, «Մեդիամարտ» ինտելեկտուալ միջմարզային 1 խաղ-մրցույթ (բրեյն-ռինգ):*

ԽՆԴԻՐ 3- Ծրագրի շահառու ՀՀ մարզաբնակ ուսանողների և ԱՊՀ երկրների երիտասարդների միջև ձևավորել համագործակցություն և զարգացնելով նրանց քննադատական մտածողությունը ու փաստերը ստուգելու ունակությունները՝ ուսումնասիրել տարածաշրջանում (ԱՊՀ երկրներ և ՀՀ մարզեր) թվային միջավայրում առավել տարածված մեդիա մանիպուլյացիաները, ապատեղեկատվության դեպքերն ու հաճախակի հանդիպող կիբեռհանցագործությունների տեսակները/դեպքերը և դրանք ներկայացնել առցանց հոդված-զեկուցումների ինչպես նաև հայ ու այլազգի շահառուներից մի մասի ներգրավմամբ պատրաստված միասնական տեսաֆիլմի միջոցով: *(առնվազն 15 հոդված/զեկույց, ուսումնական 1 տեսաֆիլմ՝ հայերեն լեզվով, ռուսերեն նշագրերով կամ հակառակը՝ կախված ֆիլմում ներգրավված մասնակիցներից և նրանց ռուսերենի իմացության մակարդակից):*

ԽՆԴԻՐ 4- Թվային գրագիտության մարզային առաջնորդների ինչպես նաև առցանց դասընթացներին մասնակցած շահառուների միջոցով մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության տարածում ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերում, մասնավորապես՝ մարզաբնակ ուսանողների շրջանում *(առնվազ 200 երկրորդային շահառու ուսանող)*, ապա և նրանց միջոցով տեղեկատվության տարածում շահառու մարզերի համայնքների բնակիչների շրջանում (հաշվի առնելով, որ մարզերի բուհերում սովորում են տվյալ մարզի տարբեր քաղաքային և գյուղական համայնքներից եկած երիտասարդներ):

Ծրագրի արդյունքները՝

Վերոնշյալ խնդիրները լուծելու դեպքում ակնկալում ենք ունենալ ծրագրային հետևյալ չափելի արդյունքները՝

1.ՀՀ սահմանամերձ վեց մարզերի (Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ, Գեղարքունիք, Լոռի, Շիրակ) բուհերից և ԱՊՀ անդամ երկրներից ընտրված, վերապատրաստված և թվային միջավայրում մեդիագրագետ 150 երիտասարդ *(120-ը ՀՀ մարզերից, 30-ը՝ ԱՊՀ երկրներից)*, ովքեր մասնակցելով առցանց տեսադասընթացների՝ զարգացրել են իրենց կարողությունները մեդիագրագիտության, կիբեռգրագիտության, թվային գրագիտության ոլորտում, գիտեն ինչպես ստուգել տեղեկատվությունը, տարբերակել ճիշտ ու կեղծ լուրերը, հավաստի ու կասկածելի մեդիա հարթակները, զգուշանալ տարածվող սպամ հաղորդագրություններից, ֆիշինգից, կեղծ առնտրային գործարքներից, պաշտպանել իրենց և հարազատներին թվային միջավայրում տարածված տարատեսակ կիբեռհանցագործություններից... (*Չափելության ցուցիչ՝ 5-7 առցանց դասընթացների էկրանի լուսանկարներ, տեսաձայնագրություններ, շուրջ է 150 մասնակիցների գրանցման առցանց թերթիկներ, մասնակիցների կողմից լրացված դասընթացների գնահատման թերթիկներ, ծրագրի ամփոփիչ տեսաֆիլմ):*

2. ՀՀ մարզաբնակ ուսանողներից ընտրված և վերապատրաստված մեդիագրագիտության և թվային գրագիտության մարզային 30 առաջնորդներ (յուրաքանչյուր շահառու մարզից 4-6 երիտասարդ), որոնք մասնակցել են «Մեդիագրագետ ուսանող» մեդիագրագիտության և թվային գրագիտության եռօրյա ամառային ճամբարի՝ խորացնելով առցանց դասընթացների ընթացքում ստացած գիտելիքներն ու կարողությունները մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռանվտանգության վերաբերյալ, ինչպես նաև ձեռք են բերել հիշյալ թեմաներով դասընթացներ վարելու մեթոդաբանություն և ծրագրի շնորհիվ կարող են ստացած գիտելիքներն ու հմտությունները տարածել իրենց շրջապատում՝ թվային միջավայրի վտանգներից պաշտպանելով ոչ միայն իրենց, այլև ընտանիքի անդամներին, հարազատներին, ընկերներին: (*Չափելության ցուցիչ՝ ընտրված 30 երիտասարդի անձնական-կոնտակտային տվյալներ, ամառային ճամբարի շրջանակում անցկացված միջոցառումների՝ դասընթացներ, նկարահանումներ, ինտերակտիվ-խաղ մրցույթ, կոնֆերանս-քննարկում լուսանկարներ, տեսաձայնագրություններ, մասնակիցների գրանցման թերթիկներ, դասընթացի մասնակիցների թեմայի վերաբերյալ գիտելիքների նախնական և վերջնական գնահատման թերթիկներ, մասնակիցների կողմից լրացված գնահատման անանուն թերթիկներ, շահառուների ներգրավմամբ ուսումնական-խորհրդատվական 1 տեսահոլովակի առկայություն, Մեդիամարտ ինտերակտիվ խաղ-մրցույթի արդյունքների արձանագրություն, ծրագրային արդյունքների ամփոփիչ 1 տեսաֆիլմ/տեսագրվածհարցազրույցներ ճամբարի մասին):*

3 ԱՊՀ երկրների երիտասարդների և ՀՀ սահմանամերձ մարզերի բուհերի ուսանողների միջև ստեղծված է համագործակցության մեդիա միջավայր, ծրագրի շահառու երիտասարդները միավորված են «ԱՊՀ մեդիագրագետ երիտասարդներ» ֆեյսբուքյան փակ խմբում/զրուցարանում, որտեղ ծրագրի ավարտից հետո ևս շարունակելու են մասնակցել մեդիա արշավների, բացահայտել և ներկայացնել թվային միջավայրում իրենց հանդիպած ապատեղեկատվությունները, կիբեռվտանգերը, կիսվել փորձով ու տեղեկատվությամբ, համագործակցել միմյանց հետ: ՀՀ և այլազգի երիտասարդների կողմից ուսումնասիրված են ծրագրի իրականացման ժամանակահատվածում իրենց տարածաշրջաններում թվային միջավայրում առավել շատ տարածված կիբեռհանցագործությունները և ամփոփված զեկույց-հոդվածներում, ինչպես նաև շահառուների մի մասի ներգրավմամբ նկարահանված երկլեզու (հայերեն լեզվով, ռուսերեն նշագրերով կամ հակառակը) ուսումնական տեսաֆիլմում: (*Չափելության ցուցիչ՝ Ծրագրի շրջանակում բացված «ԱՊՀ մեդիագրագետ երիտասարդներ» ֆեյսբուքյան հարթակի հղումը, ԱՊՀ երկրների երիտասարդների և ՀՀ մարզաբնակ ուսանողների մասնակցությամբ օնլայն-օֆլայն ձևաչափով անցկացված 1 կոնֆերանսի լուսանկարներ, տեսաձայնագրություն, մասնակիցների գրանցման թերթիկներ, ԱՊՀ երկրներում ծրագրի իրականացման ժամանկահատվածում առավել տարածված կիբեռհանցագործությունների և մեդիա մանիպուլյացիաների վերաբերյալ մասնակիցների իրականացրած ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ առնվազն 15 զեկույց-հոդվածներ blogger.com, tilda կամ այլ հարթակում, հայ և այլազգի երիտասարդների մասնակցությամբ նկարահանված «ԱՊՀ երկրներում տարածված մեդիամանիպուլյացիաներն ու կիբեռհանցագործությունները երիտասարդների դիտարկմամբ» կամ «Ինչպես պաշտպանվել թվային միջավայրի վտանգներից. խորհուրդներ ԱՊՀ երկրների երիտասարդներից» կամ նմանատիպ այլ վերնագրով 1 տեսանյութի առկայություն՝ հայերեն լեզվով ռուսերեն նշագրերով կամ հակառակը, որը կներկայացնեի ԱՊՀ երկրներում թվային միջավայրում տարածված*

հանցագործությունների դեպքերը և երիտասարդների խորհուրդները ինչպես պաշտպանվել թվային միջավայրում առկա վտանգներից, հոլովակի հղումը համացանցում, դիտումների քանակը):

4. ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերում՝ **հատկապես բուհերի ուսանողների շրջանում բարձրացել է մեդիագրագիտության, կիբերգրագիտության և թվային գրագիտության վերաբերյալ գիտելիքների մակարդակը՝** շնորհիվ մեդիագրագիտության և թվային գրագիտության մարզային առաջնորդների՝ իրենց մարզերում անցկացրած տեղեկատվական հանդիպում-սեմինարների և ծրագրի առաջին փուլում ուսանողների համար անցկացված առցանց դասընթացների: Նկատի ունենալով, որ մարզերի բուհերում սովորում են մարզի տարբեր համայնքներից երիտասարդներ, ակնկալում ենք, որ նրանք իրենց ստացած տեղեկատվությամբ կկիսվեն ընկերների, ընտանիքի անդամների, բարեկամ-հարևանների հետ: Արդյունքում տեղի կունենա տեղեկատվության տարածում, ծրագրի աշխարհագրության ընդլայնում, անուղղակի շահառուների քանակի ավելացում: *(Չափելիության ցուցիչ՝ թվային գրագիտության մարզային առաջնորդների կողմից մարզերի բուհերում մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության առանցքային հարցերի վերաբերյալ կազմակերպված առնվազն 10 տեղեկատվական հանդիպում-սեմինարներ՝ առնվազն 200 շահառու ուսանողների մասնակցությամբ, հանդիպում-սեմինարների լուսանկարներ, տեսաձայնագրություններ, մասնակիցների մասնակցության թերթիկներ, ծրագրի ամփոփիչ տեսաֆիլում հնչեցված կարծիքներ):*

<u>Ծրագրի ազդեցությունը</u> և շարունակականությունը կգնահատվի երկու մակարդակում՝ հասարակական և անհատական:

Անհատական առումով ծրագրի անմիջական մասնակիցը կզարգացնի մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության կարողություններ, կզարգացնի իր քննադատական մտածողությունը, կսովորի վերլուծել փաստերը, ստուգել տեղեկատվությունը, տարբերակել հավաստի ու կեղծ լուրերը, չտարածել ապատեղեկատվություն, վիրուսներ, ավելի պաշտպանված կլինի թվային միջավայրում հանդիպող տարաբնույթ կիբեռհանցագործություններից, դրամաշորթությունից և այլն, մի խոսքով՝ թվային միջավայրում կլինի ավելի գրագետ և պաշտպանված: Շահառու երիտասարդները սկզբանական շրջանում մեդիա փորձագետների աջակցությամբ, ապա ինքնուրույն կբացահայտեն թվային միջավայրում (օնլայն խաղեր, սոցիալական ցանցեր) առկա վտանգները, ապատեղեկատվությունը և կօգնեն իրենց շրջապատի մարդկանց (ընտանիքի անդամներ, ընկերներ, ծանոթ-բարեկամներ) կողմնորոշվել թվային աշխարհի խառնաշփոթում, լինել ավելի պաշտպանված և մեդիագրագետ՝ աստիճանաբար յուրացնելով թվային էթիկայի կանոնները:

Հասարակական առումով անմիջական շահառուները իրենց ստացած գիտելիքներով կկիսվեն այլոց՝ ծրագրի անուղղակի շահառուների հետ, տեղի կունենա ծրագրի արդյունքների բազմապատկում և շղթայական փոխանցում հասարակության լայն շերտերին, ինչն էլ ծրագրի երկարաժամկետ արդյունքում կնպաստի շահառու մարզերի ուսանողության և տարբեր համայնքների բնակչության շրջանում մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության մակարդակի բարձրացմանը, նրանց գրագետ, իրազեկ ու պաշտպանված գործունեությանը թվային միջավայրում, ինչն էլ իր հերթին կնվազեցնի կիբեռհանցագործությունների ենթարկման մակարդակը ծրագրի թիրախ ընտրված ՀՀ սահմանամերձ մարզերի բնակչության, մասնավորապես՝ երիտասարդության շրջանում:

Ծրագրիրը կնպաստի նաև ՀՀ մարզերի ուսանողության բովանդակալից և հետաքրքիր ժամանցի կազմակերպմանը, ամառային արդյունավետ հանգստին՝ համատեղելով հաճելին օգտակարի հետ, ուսանողների ոչ ֆորմալ կրթությանը, մարզերի ուսանողների և ԱՊՀ երիտասարդների միջև կապերի հաստատմանն ու համագործակցությանը, մարզային բուհերի միջև առողջ մրցակցությանը՝ աշխուժություն մտցնելով ՀՀ մարզաբնակ ուսանողների առօրյայում, ընդլայնելով նրանց հայրենաճանաչությունը. Ամառային ճամբարը կանցկացվի Հայաստանի ամենահյուսիսում գտնվող Ստեփանավան գողտրիկ քաղաքում՝ հնարավորություն տալով ուսանողներին ամռան շոգ օրերին մի քանի օր անցկացնել զով Ստեփանավանը, բացահայտել երբեմնի գրոսաշրջային մեծ համբավ ունեցող փոքրիկ քաղաքի բնությունը, մարդկանց, տեսարժան վայրերն ու պատմամշակութային հուշարձանները

Գործողություններ

Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատա նքային պլան՝ համաձայն ստորև ներկայացված ձևաչափի

Խնդիր 1-ը լուծելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հաջորդական գործողությունները՝

Գործողություն 1.1. Ծրագրի նախապատրաստական աշխատանքներ՝ ծրագրի աշխատակազմի, ծառայություններ և ապրանքներ մատուցող կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում, գնման գործընթացների կազմակերպում:

Գործողություն 1.2. Ծրագրի լոգոտիպի մշակում, ծրագրի մասին տեղեկատվության և դասընթացների մասնակցության առցանց հայտադիմումի պատրաստում՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, տարածում թիրախ մարզերի բուհերում, ԱՊՀ երկրների գործընկեր բուհերի և երիտասարդական ՀԿ-ների շրջանում, համացանցում:

Գործողություն 1.3. Ծրագրի առաջին փուլով նախատեսված առցանց դասընթացների նախապատրաստական աշխատանքներ՝ դասընթացի ժամային գրաֆիկի հստակեցում, օրակարգի և ուսումնական նյութերի մշակում:

Գործողություն 1.4. Ծրագրի աշխատակազմի և դասընթացավար-փորձագետների կողմից ծրագրի հայ և այլազգի շահառուների ընտրություն, մասնակիցների հետ կապի ապահովում հեռախոսազանգերի և էլեկտրոնային փոստի միջոցով:

Գործողություն 1.5. Կարողությունների զարգացման առցանց դասընթացների անցկացում ՀՀ մարզաբնակ 120 և ԱՊՀ երկրներից 30, ընդհանուր՝ 150 երիտասարդի համար *(մեկօրյա օնլայն դասընթացներ՝ առնվազն 4 ժամ տևողությամբ, 15-20 րոպե ընդմիջմամբ, նախատեսվում է 5-7 դասընթաց՝ կախված տվյալ օրը ներգրավված մասնակիցների թվից, յուր. հանդիպում արդյունավետ անցկացնելու համար 1 հանդիպման ժամանակ կներգրավվի մինչև 30 մասնակից, ընդհանուր 150 մասնակից)՝* մեդիագրագիտության, թվային գրագիտության, կիբեռգրագիտության վերաբերյալ գիտելիքների և հմտությունների փոխանցում շահառու երիտասարդներին տեսական դասախոսությունների և ինտերակտիվ վարժանք-առաջադրանքների, կոնկերտ մեդիա նյութերի հետ աշխատանքի և այլ մեթոդների համադրմամբ:

Գործողություն 1.6. Առցանց դասընթացի հայ և այլազգի մասնակիցներին կհանձնարարվի ուսումնասիրել ծրագրի իրականացման ժամանակահատվածում թվային միջավայրում վերջին շրջանում իրենց առվել հաճախ հանդիպող հանցագործությունների տեսակներն ու դեպքերը և դրանք հակիրճ ներկայացնել որպես ամփոփ հոդված-զեկույց՝ A4 ձևաչափի մեկ-երկու էջի սահմանում՝ ուղարկելով ՀԿ-ի էլ. փոստին:

Գործողություն 1.7 . Առցանց դասընթացների ամփոփում, գնահատում, շահառուների հետ հետադարձ կապն ապահովող գործիքակազմի մշակում, ներառում ծրագրի «ԱՊՀ մեդիագրագետ երիտասարդներ» ֆեյսբուքյան խմբում և զրցուցարանում:

ԽՆԴԻՐ 2 -ը լուծելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հաջորդական գործողությունները՝

Գործողություն 2.1. Առցանց դասընթացներին մասնակցած 120 մարզաբնակ հայ ուսանողներից, ըստ նրանց մոտիվացիայի և դասընթացների ընթացքում ցուցաբերած առաջադիմության/ակտիվության, կընտրվեն մինչև 30 շահառու (յուրաքանչյուր մարզից 4-6 մասնակից), որոնք կվերապատրաստվեն՝ որպես **մեդիագրագիության և թվային գրագիտության մարզային առաջնորդներ**՝ յուրաքանչյուրն ստանձնելով պարտավորություն՝ իր մարզում կազմակերպելու մեդիագրագիտության, կիբեռգրագիտության և թվային գրագիտության ուղղությամբ իրազեկման արշավներ, մասնավորապես՝ տեղեկատվական հանդիպում-քննարկումներ մարզի բուհերում սովորող 16-30 տարեկան երիտասարդների հետ:

Գործողություն 2. 2. Թվային գրագիտության մարզային առաջնորդների համար մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության «Մեդիագրագետ ուսանող» **ամառային եռօրյա ճամբարի նախապատրաստական աշխատանքներ**՝ մասնակիցների համար սույն ծրագրի լոգոտիպով և ՀԿ-ի կողմից ՀՀ ԿԳՄՄՆ աջակցությամբ նախորդ տարի իրականացված նմանատիպ ծրագրի ուսուցողական տեսաֆիլմի QR կոդով շապիկների տպագրում, մասնակիցների ուղևորափոխադրման, կեցության, գրենական պիտույքների ձեռքբերման, դասընթացների և ճամբարային միջոցառումների կազմակերպական, օրակարգի հստակեցման, ուսումնական նյութերի տպագրման, մրցույթի մրցանակների ձեռքբերման և այլ աշխատանքներ:

Գործողություն 2. 3. «Մեդիագրագետ ուսանող» ամառային եռօրյա ճամբարի անցկացում Լոռու մարզի Ստեփանավան գրոսաշրջային քաղաքում: Կրթության ֆորմալ և ոչ ֆորմալ մեթոդների համադրմամբ կանցկացվեն դասընթացներ մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության և այդ թեմաների դասավանդման մեթոդների վերաբերյալ, թվային գրագիտության մարզային առաջնորդները կզարգացնեն մեդիագրագիտության տեղեկատվական արշավներ կազմակերպելու, սեմինար-հանդիպումներ վարելու հմտություններ:

Գործողություն 2.4. Ճամբարի երկրորդ օրվա ավարտին կկազմակերպվի առկա-հեռակա ձևաչափով կոնֆերանս-քննարկում ճամբարի մասնակից ուսանողների և ԱՊՀ երկրների ծրագրի շահառու երիտասարդների միջև, որի ընթացքում կներկայացվի ծրագրի շրջանակում երիտասարդների կատարած ուսումնասիրությունների արդյունքները՝ իրենց երկրներում/ ՀՀ մարզերում թվային միջավայրում առավել տարածված կիբեռհանցագործությունների ու վտանգների մասին:

Գործողություն 2.5. Ճամբարականները ծրագրի փորձագետների հետ կմշակեն տարածված կիբեռհանցանքների և դրանցից պաշտպանվելու վերաբերյալ ուսուցողական-խորհրդատվական տեսահոլովակի սցենար և կմասնակցեն պրոֆեսիոնալ ստուդիայի կողմից նկարահանվող հոլովակի աշխատանքներին:

Գործողություն 2. 6. Ճամբարը կավարտվի **«Մեդիամարտ» ինտելեկտուալ միջմարզային խաղ-մրցույթով**, որի ընթացքում մասնակից ուսանողները ըստ մարզերի կկազմեն թիմեր և կմրցեն միմյանց հետ՝ ամփոփելով ծրագրի ընթացքում ստացած գիտելիքները: Առաջին երեք տեղերն զբաղեցրած թիմերը կպարգևատրվեն խրախուսական մրցանակներով:

Գործողություն 2.7. Մեդիագրագիտության և թվային գրագիտության ամառային ուսանողական ճամբարի արդյունքների ամփոփում, մասնակիցների կողմից գնահատում, մասնակիցներին հավաստագրերի հանձնում, մասնակիցների միջև հետադարձ կապի ապահովում:

ԽՆԴԻՐ 3 –ի լուծմանը միտված գործողություններ՝

Գործողություն 3.1. Առցանց դասընթացներին մասնակցած ԱՊՀ երկրների երիտասարների և ՀՀ մարզերի ուսանողների համար ֆեյսբուք սոցիալական ցանցում ստեղծել ֆեյսբուքյան փակ խումբ և զրուցարան՝ ներառելով բոլոր հնարավոր մասնակիցներին, ովքեր գրանցված են ֆեյսբուքում: Այս կերպ, շահառուները ոչ միայն կկարողանան կապ պահպանել հաստատել միմյանց հետ, այլև սկզբանական շրջանում ծրագրի մեդիա փորձագետների աջակցությամբ, ապա և ինքնուրույն կստուգեն և կտեղադրեն իրենց կողմից ստուգված, հավաստի տեղեկատվություն, մասնավորապես՝ տեղական (համայնքային, մարզային) նշանակության ստուգված լուրեր, ինչպես նաև թվային միջավայրում պաշտպանված ու գրագետ լինելու վերաբերյալ տեղեկատվական նյութեր՝ հոդվածներ, տեսանյութեր՝ օգնելովմիմյանց և իրենց բնակավայրերի հանրությանը ճիշտ կողմնորոշվելու թվային միջավայրում, առկա վտանգներից, չտարածելու կեղծ տեղեկատվություն, խուճապ, սպամ ներառող նյութեր...

Գործողություն 3.2. Ծրագրի շահառու հայ և օտարազգի երիտասարդներին տալ մեկ ամիս ժամանակ՝ ուսումնասիրելու թվային միջավայրում իրենց առավել հաճախ հանդիպող վտանգները, մեդիա մանիպուլյացիաներն ու կիբեռհանցագործությունները և ներկայացնել որպես հակիրճ հոդված-զեկույց՝ ուղարկելով ծրագրի աշխատակազմին և մեդիա փորձագետներին:

Գործողություն 3.3. Ծրագրի փորձագետները կուսումնասիրեն ծրագրի հայ և օտարազգի շահառուների ներկայացրած ուսումնասիրությունները, կհամախմբեն՝ ըստ նմանությունների և կխմբագրեն, լավագույն նյութերը կհրապարակվեն blogger.com, tilda կամ այլ համացանցային հարթակում,

Գործողություն 3.4. Ընտրված հոդված-զեկույցներից որոշ հատվածներ, որպես ուղերձներ, կհնչեն ծրագրի շահառու հայ և այլազգի երիտասարդների մի մասի մասնակցությամբ նկարահանվող ուսումնական-խորհրդատվական տեսահոլովակում, որը կտեղադրվի յութուբում և ծրագրին մասնակից հայ և ԱՊՀ երկրների երիտասարդների միջոցով կտարածվի համացնացում, ՀՀ թիրախ մարզերում, ԱՊՀ մասնակից երկրներում և այլուր...:

ԽՆԴԻՐ 4-ի լուծմանը միտված գործողություններն են՝

Գործողություն 4.1. Մեդիագրագիտության և թվային գրագիտության մարզային առաջնորդները փորձագետների հետ առցանց կմշակեն տեղեկատվական արշավների բովանդակային նյութերը (պրեզենտացիաներ, տեսական և գործնական նյութեր, առաջադրանքներ, խաղեր): Յուրաքանչյուր ընտրված շահառու մեկ թեմայի ուղղությամբ կանցկացնի փորձնական թրեյնինգ (օնլայն տարբերակով)՝ միաժամանակ զգացնելով նաև դասընթացավարի հմտություններ:

Գործողություն 4.2. Թվային գրագիտության մարզային առաջնորդների ներգրավմամբ տեղեկատվական հանդիպումների անցկացման համար պայմանավորվածությունների ձեռքբերում մարզերի բուհերի հետ, տեղեկատվական հանդիպում-սեմինարների կազմակերպչական աշխատանքներ, մեկօրյա հանդիպումների անցակցման գրաֆիկի և օրակարգի հստակեցում:

Գործողություն 4.3. Մեդիագրագիտության, կիբեռգրագիտության և թվային գրագիտության առանցքային հիմնախնդիրների, թվային միջավայրում անվտանգ ու իրազեկ լինելու կարևոր քայլերի վերաբերյալ թիրախային 6 մարզերից յուրաքանչյուրում առնվազն 1-2 տեղեկատվական հանդիպում-սեմիանրների անցկացում 16-30 տարեկան առնվազն 200 շահառուների ներգրավմամբ (ընդհանուր՝ առնվազն 10 հանդիպում): Տեղեկատվական սեմինար-հանդիպումներին մոնիթորինգի և խորհրդատվության նպատակով օնլայն կամ օֆլայն (կախված մարզի աշխարհագրական դիրքից, փորձագետների ժամանակային գրաֆիկից, ծանրաբեռնվածությունից) տարբերակով ներկա կլինեն և կհետևեն ծրագրի ախատակազմը և մեդիա փորձագետները:

Գործողություն 4.4. Տեղեկատվական հանդիպում-սեմինարների ամփոփում, հանդիպումներին մասնակցած ուսանողների գիտելիքների գնահատում, հետագա համագործակցության և հետադարձ կապի ապահովում, ըստ ցանկության ներառում «Մեդիագրագետ երիտասարդների բանակ» առցնաց տիրույթում՝ ֆեյսբուքյան խմբում:

ԽՆԴԻՐ 5. - **Ծրագրի տեսանելիության ապահովում, ծրագրային արդյունքների գնահատում և ամփոփում, հաշվետվությունների պատրաստում.**

Գործողություն. Գործողություն 5.1. Ծրագրի տեսանելիությունն ապահովելու նպատակով ծրագրի ամբողջ ընթացքը կլուսանկարահանվի և կտեսանկարահանվի, կպատրասվի ծրագրային արդյունքների վերաբերյալ ամփոփիչ տեսաֆիլմ: Այն կտեղադրվի համացանցում և կտարածվի ծրագիրն իրականացնող և ֆինանսավորող կազմակերպությունների, գործընկերների, շահառուների, շահագրգիռ այլ կողմերի համացանցային տարբեր հարթակներում, սոցիալական ցանցերում, կտրամադրվի դրամաշնորհատու կազմակերպությանը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը:

Գործողություն 5.2. Ծրագրի արդյունքների վերաբերյալ տեղեկատվական հոդվածներ կպատրաստվեն և կտեղադրվեն ինչպես ծրագրային բլոգներում, ՀԿ-ի և գործընկերների համացանցային հարթակներում, այնպես էլ հոդվածները կուղարկվեն տարբեր ԶԼՄ-ների՝ erit.am, marzer.am, media.am, civic.am mamul.am, և այլ հարթակներում:

Գործողություն 5.3. Ծրագրի արդյունքների ափմոփում, գնահատում, նկարագրական և ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում դրամաշնորհատու կազմակերպությանը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը:

Հարկ է նշել, որ ծրագրի արդյունքները պահպանելու, շարունակելու և զարգացնելու համար ծրագրային գործողությունների ավարտից հետո ծրագրի աշխատակազմը և փորձագետները շարունակելու են կապ

պահպանել ծրագրի շահառուների հետ ըստ անհրաժեշտության աջակցելով նրանց զրաղետ ու պաշտպանված, ակտիվ ու իրազեկ թվային մասնակցությանը հանրային կյանքին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն *«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ*

Ծրագիր *«ՀՀ մարզաբնակ ուսանողների մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր՝ ԱՊՀ երիտասարդների հետ համագործակցությամբ»*

Ժամանակահատված *15.04.2024թ.-30.11.2024թ.*

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Ծրագրի նախապատրաստական աշխատանքներ, պայմանագրերի կնքում, գնման գործընթացների կազմակերպում:	Ծրագրի ղեկավար, հաշվապահ												
2	Ծրագրի լոգոտիպի մշակում, ծրագրի մասին տեղեկատվության և դասընթացների մասնակցության առցանց հայտադիմումի պատրաստում և տարածում:	Ծրագրի ղեկավավար, համակարգող, թարգմանիչ												
3	**Ծրագրի առաջին փուլով նախատեսված առցանց դասընթացների** նախապատրատական աշխատանքներ:	Ծրագրի ղեկավար, փորձագետներ, հաշվապահ												
4	Ծրագրի հայ և այլազգի շահառուների ընտրություն, մասնակիցների հետ կապի ապահովում	Ծրագրի ղեկավար, փորձագետներ, համակարգող, թարգմանիչ												
5	Կարողությունների զարգացման առցանց դասընթացների անցկացում:	Փորձագետ-դասընթացվարներ ղեկավար, համակարգող, թարգմանիչ												
6	Թվային միջավայրում հանդիպող վտանգների ու հանցանքների ուսումնասիրություն շահառուների կողմից և հոդված-զեկույցների պատրաստում:	Ծրագրի շահառուներ, փորձագետներ, թարգմանիչ												
7	Առցանց դասընթացների ամփոփում, գնահատում, շահառուների հետ հետադարձ կապն ապահովող գործիքակազմի մշակում:	Ծրագրի համակարգող, շահառուներ, թարգմանիչ												

8	Առցանց դասընթացներին մասնակցած մարզաբնակ հայ երիտասարդներից թվային գրագիտության մարզային առաջնորդների ընտրություն:	Ծրագրի ղեկավար, փորձագետներ, համակարգող												
9	Թվային գրագիտության մարզային առաջնորդների համար «Մեդիագրագետ ուսանող» ամառային եռօրյա ճամբարի նախապատրաստական աշխատանքներ՝ շապիկների տպագրում, ուղևորափոխադրման, կեցության և այլ հարցերի կարգավորում:	Ծրագրի ղեկավար, փորձագետներ, համակարգող, հաշվապահ, թարգմանիչ												
10	Ամառային եռօրյա ճամբարի դասընթացների անցկացում	Ծրագրի ղեկավար, փորձագետներ, համակարգող, թարգմանիչ												
11	Ճամբարի մասնակից ուսանողների և ԱՊՀ երկրների ծրագրի շահառու երիտասարդների միջև առկա-հեռակա ձևաչափով կոնֆերանս-քննարկում թվային միջավայրում առավել տարածված կիբեռհանցագործությունների ու դրանցից պաշտպանվելու մասին:	Ծրագրի ղեկավար, փորձագետներ, համակարգողներ, շահառուներ, թարգմանիչ												
12	Կիբեռհանցագործությունների և դրանցից պաշտպանվելու վերաբերյալ ուսուցողական-խորհրդատվական տեսահոլովակի նկարահանում:	Ծրագրի ղեկավար, փորձագետներ, շահառուներ, թարգմանիչ, նկարահանող ստուդիա												
13	«Մեդիամարտ» ինտելեկտուալ միջմարզային խաղ-մրցույթի անցկացում և մրցանակաբաշխություն:	Ծրագրի ղեկավար, փորձագետներ, համակարգող, շահառուներ												
14	Ճամբարի արդյունքների ամփոփում, մասնակիցների կողմից գնահատում, մասնակիցներին հավաստագրերի հանձնում, հետադարձ կապի ապահովում	Ծրագրի համակարգող, շահառուներ, թարգմանիչ												
15	Ծրագրի հայ և այլզգի շահառուների համար ֆեյսբուքյան խմբի և զրուցարանի ստեղծում: Շահառուների կողմից	Ծրագրի համակարգող, փորձագետներ, շահառուներ,												

	ստուգված մեդիա բովանդակությունների և օգտակար մեդիա նյութերի տեղադրում:	թարգմանիչ												
16	Ծրագրի շահառու երիտասարդների կողմից թվային միջավայրում հանդիպող վտանգների ու կիբերհանցագործությունների ուսումնասիրություն և հոդված-զեկույցների պատրաստում:	Փորձագետներ, Շահառուներ, համակարգող, թարգմանիչ												
17	Ներկայացված հոդված-զեկույցների խմբագրում և հրապարակում blogger.com, tilda կամ այլ համացանցային հարթակում:	Ծրագրի փորձագետներ, ծրագրի ղեկավար, թարգմանիչ												
18	Շահառու հայ և այլազգի երիտասարդների մասնակցությամբ ուսումնական-խորհրդատվական տեսահոլովակի պատրաստում:	Ծրագրի փորձագետներ, շահառուներ, թարգմանիչ												
19	Մարզերում թվային գրագիտության առաջնորդների կողմից անցկացվելիք տեղեկատվական արշավների բովանդակային նյութերի մշակում, շահառու երիտասարդների՝ որպես դասընթացվարի կարողությունների զարգացում:	Ծրագրի փորձագետներ, շահառուներ												
20	Տեղեկատվական հանդիպումների անցկացման համար պայմանավորվածությունների ձեռքբերում մարզերի բուհերի հետ, տեղեկատվական հանդիպում-սեմինարների կազմակերպչական աշխատանքներ:	Ծրագրի ղեկավար, համակարգող, շահառուներ, թարգմանիչ												
21	Շահառու մարզերի բուհերում տեղեկատվական հանդիպում-սեմիանրների անցկացում:	Ծրագրի շահառուներ, ծրագրի ղեկավար, համակարգող, փորձագետներ՝ օնլայն կամ օֆլայն ձևաչափով												
22	**Գործողություն 4.4.** Տեղեկատվական հանդիպում-սեմինարների ամփոփում,գնահատում, հետագա համագործակցության և	Ծրագրի համակարգող, շահառուներ												

	հետադարձ կապի ապահովում, ըստ ցանկության ներառում «Մեդիագրագետ երիտասարդների բանակ» ֆեյսբուքյան խմբում:														
23	Ծրագրի վերաբերյալ ամփոփիչ տեսաֆիլմի պատրաստում:	Ծրագրի ղեկավար, փորձագետներ, տեսանյութերի պատրաստման ստուդիա, թարգմանիչ													
24	Ծրագրի լուսաբանում ԶԼՄ-ներում:	Ծրագրի ղեկավար և համակարգող													
25	Ծրագրի ամփոփում, գնահատում, նկարագրական և ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և հանձնում ՀՀ ԿԳՄՄՆ-ին:	Ծրագրի ղեկավար, հաշվապահ													

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ովքեր են ծրագրի ուղղակի շահառուները: Նկարագրեք ծրագրի շահագրգիռ կողմերին և հետաքրքրված խմբերին և նրանց ներգրավվածությունը ծրագրում:

<u>Ծրագրի ուղղակի (առաջնային) շահառուներն</u> են լինելու ՀՀ սահմանամերձ մարզերի՝ Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերի բուհերում սովորող 16-30 տարեկան 320 երիտասարդ և ԱՊՀ անդամ երկրներից 30 երիտասարդ, ընդհանուր՝ 350 հայ և այլազգի երիտասարդներ:

Ծրագրի առաջին փուլին կմասնակցեն վերոնշյալ մարզերից ընտրված 16-30 տարեկան 120 երիտասարդ՝ յուրաքանչյուր մարզից 20 երիտասարդ և ԱՊՀ անդամ պետություններից (Ռուսաստան, Բելառուս, Մոլդովա, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Ուզբեկստան) ընտրված ընդհանուր 30 երիտասարդ (ակնկալում ենք, որ յուրաքանչյուր երկրից կմասնակցի մինչև հինգ մասնակից), ովքեր հետաքրքրված են մեդիագրագիտությամբ, տարածաշրջանում կիբերհանցագործությունների թվի նվազեցմամբ, ուզում են թվային միջավայրում լինել իրազեկ ու առավել պաշտպանված՝ ձեռք բերելով մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության վերաբերյալ արդիական գիտելիքներ ու հմտություններ և պատրաստ են ձեռք բերած գիտելիքներն օգտագործել ի նպաստ հանրության, դրանք փոխանցել այլոց, մասնավորապես՝ իրենց ընտանիքի անդամներին, ընկերներին, ծանոթներին, համայնքի բնակիչներին:

Առաջին փուլի մասնակիցների ընտրությունը կատարվելու է առցանց մշակված երկլեզու (հայերեն և ռուսերեն) հայտադիմումների հիման վրա ծրագրի աշխատանքային թիմի կողմից՝ հաշվի առնելով դիմորդների հետաքրքրության համապատասխանելիությունը դասընթացի թեմաների հետ, մասնակցելու շարժառիթը և դասընթացի ընթացքում ստացած գիտելիքների և կարողությունների օգտագործման, տարածման ուղիները, ռուսերեն լեզվի իմացության մակարդակը: Մասնակիցների ընտրության հարցում պահպանվելու է սեռային հավասար բալանսը, խտրականություն՝ ըստ մասնակիցների սեռի, կրոնի, քաղաքական հայացքների և այլն, չի դրսևորվելու: Ծրագրի աշխատանքային թիմի կողմից խրախուսվելու է ներքոնշյալ խմբերի երիտասարդների մասնակցությունը ծրագրին՝

- Սահմամամերձ համայնքների երիտասարդներ,
- Պատերազմի պատճառով Արցախից տարհանված և շահառու մարզերի բնակավայրերում ապաստանած երիտասարդներ,
- Սահմանափակ հնարավորություններով երիտասարդներ (սոցիալապես անապահով ընտանիքների երիտասարդներ, հաշմանդամություն ունեցող երիտասարդներ):

Ծրագրի երկրորդ փուլին մասնակցելու և որպես թվային գրագիտության մարզային առաջնորդներ վերապատրաստվելու հնարավորություն կստանան առաջին փուլին մասնակցած 22 մարզաբնակ 120 շահառուներից 30-ը՝ յուրաքանչյուր մարզից 5 ուսանող, որոնք կընտրվեն հաշվի առնելով առաջին փուլի ընթացքում ցուցաբերած ակտիվությունը, առաջընթացը, ներկայացված առաջադրանքների կատարման որակը և իհարկե ծրագրի հետագա փուլերին մասնակցելու շարժառիթն ու մոտիվացիան: Ծրագրի երկրորդ փուլում նախատեսված ԱՊՀ երկրների երիտասարդների կոնֆերանսին և ուսումնական-խորհրդատվական տեսանյութի պատրաստման աշխատանքներին առցանց կմիանան նաև ԱՊՀ անդամ պետություններից մասնակցող 30 երիտասարդները: Ընդհանուր առմամբ ծրագրի երկրորդ փուլում կներգրավվի 60 հայ և այլազգի 16-30 տարեկան երիտասարդ:

Ծրագրի երրորդ փուլի անմիջական շահառուներն են լինելու_ Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերի բուհերում սովորող 16-30 տարեկան առնվազն 200 ուսանող, ովքեր ծրագրի երրորդ փուլում կմասնակցեն թվային գրագիտության մարզային առաջնորդների կոմից իրենց մարզերի բուհերում կազմակերպված տեղեկատվական հանդիպում-քննարկումներին՝ ձեռք բերելով մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության վերաբերյալ տարրական և կարևոր գիտելիքներ, զարգացնելով թեմայի վերաբերյալ իրենց բնադատական մտածողությունը և թվային միջավայրում փաստերը ստուգելու կարողությունները:

Ծրագրի անուղղակի շահառու ենք դիտարկում Ծրագրի առաջնային և երկրորդային ուղղակի շահառուների (30+120+200=350) ընտանիքի անդամներին (ընտանիքի անդամների քանակը միջինում դիտարկելով 4՝ կստացվի 4x350=1400, կունենանք շուրջ 1400 անուղղակի շահառու), քանի որ ուղղակի շահառուներն իրենց ձեռք բերած գիտելիքներով ու կարողություններով անշուշտ օգնելու են նաև ընտանիքի անդամներին թվային միջավայրում լինել ավելի իրազեկ, պաշտպանված, տարբերակել հավաստի և կեղծ տեղեկատվական աղբյուրները, ստուգել փաստերը, չտարածել ապատեղեկատվություն, պաշտպանել անձնական տվյալները, զերծ մնալ համացանցում տարածված մանիպուլյացիաներից, դրամաշորթությունից, պոռնոգրաֆիկ և սպամ տարածող նյութերից, ֆիշինգից, կիբեր բուլինգից և կիբերհանցագործության այլ տեսակներից:

Ընդհանուր առմամբ ծրագրի անուղղակի շահառու է Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերի բնակչությունը, քանի որ մարզերի բուհերում սովորում են ինչպես մարզկենտրոնի, այնպես էլ մարզի տարբեր քաղաքային և գյուղական համայնքների երիտասարդներ: Ծրագրային գործողությունների արդյունքում ծրագրի անմիջական շահառուների միջոցով շահառու մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերում կբարձրանա մեդիագրագիտության, կիբերգրագիտության և թվային գրագիտության մակարդակը, կբարձրանա բնակիչների ակտիվ և իրազեկ թվային մասնակցությունը հանրային կյանքին, նրանք ավելի պաշտպանված կլինեն ապատեղեկատվություններից, համացանցային զանազան խարդախություններից ու կիբեռհանցագործություններից, կդառնան ավելի գրագետ մեդիա սպառող:

Ծրագրի շահագրգիռ կողմերն են_Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերում գործող բուհերը և նրանց ուսանողական խորհուրդները, որոնք շահագրգիռ են իրենց ուսանողների մեդիագրագիտությամբ, թվային գրագիտությամբ և կիբեռգրագիտությամբ, քանի որ ուսանողները հնարավորություն են ստանալու ոչ ֆորմալ կրթության միջոցով ձեռք բերել նոր գիտելիքներ ու հմտություններ, որի շնորհիվ համացանցում կլինեն ավելի պաշտպանված և թվային միջավայրը կօգտագործեն ավելի արդյունավետ ու նպատակային, այդ թվում՝ դասերը պատրաստելիս սովորելով օգտվել վստահելի և հավաստի աղբյուրներից, չհավատալով համացանցում տեղ գտած ցանկացած տեղեկատվության: Բացի այդ ծրագրի շրջանակում կազմակերպվող մրցույթների, ինտելեկտուալ խաղերի շնորհիվ ուսանողների կյանքը կդառնա հետաքրքիր և բովանդակալից: Բուհերն աջակցելու են ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածման, անմիջական շահառուների բացահայտման և ներգրավման, ծրագրի առաջին և երրորդ փուլով նախատեսված դասընթացների ու տեղեկատվական հանդիպումների արդյունավետ կազմակերպման և անցկացման կազմակերպչական հարցերում: Ծրագրի գործընկեր, ինչպես նաև շահառու դիտարկվող բուհերի ցանկն ըստ մարզերի՝

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ՝ Գորիսի պետական համալսարան, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գորիսի մասնաճյուղ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Սիսիանի մասնաճյուղ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ՝ Գավառի պետական համալսարան (ԳՊՀ), Վարդենիսի մանկավարժական ինստիտուտ:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիլիջանի մասնաճյուղ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ՝ Վանաձորի պետական համալսարան, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղ, Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղ, Հայաստանում Եվրոպական համալսարանի՝ Վանաձորի մասնաճյուղ, Վանաձորի «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ՝ Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարան (ՇՊՀ), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրիի մասնաճյուղ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրիի մասնաճյուղ, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրիի մասնաճյուղ, Երևանի Պետական Կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղ, Գյումրիի «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարան:

Ծրագրի շահագրգիռ կողմ են նաև շահառու մարզերի մարզպետարանները (մասնավորապես՝ մարզպետարանների կրթության վարչությունները, լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինները), որոնք շահագրգռված են իրենց մարզերի բնակիչների, մասնավորապես՝ երիտասարդների մեդիագրագիտության, կիբերգրագիտության և թվային գրագիտության մակարդակի բարձրացմամբ, որովհետև եթե թվային միջավայրում համայնքի/մարզի բնակիչը ավելի խելացի է գործում, չի տարածում ապատեղեկատվություն, սպամներ ու վիրուսներ, ավելի պաշտպանված է կիբեռհանցագործություններից անձնապես, հետևաբար տվյալ համայնքը/մարզը ինչ-որ չափով ավելի պաշտպանված է կիբեռհանցագործությունների ենթարկման հավանականություններից, համացնացային տարատեսակ խարդավանքներից: Նշված կառույցներն աջակցելու են մարզերից ուսանողների ուղևորափոխադրումների կազմակերպման, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, բուհերի հետ արդյունավետ համագործակցելու հարցերում:

Առաջարկվող սույն ծրագրի շրջանակում «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ն համագործակցելու է «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»-ի (նախկին «Ինտերյուս»-ի) հետ (*առկա է բանավոր պայմանավորվածություն ՄՆԿ-ի մեդիագրագիտության ծրագրերի ղեկավարի հետ*), քանի որ կազմակերպության առաքելություններից է բարձրացնել մեդիագրագիտության մակարդակը մարզերում, հատկապես՝ երիտասարդների շրջանում, ուստի ՄՆԿ-ն շահագրգիռ է ծրագրի իրականացմամբ և պատրաստ է նախագծի իրականացման ընթացքում աջակցելու դասընթացների ու տեղեկատվական հանդիպումների թեմաների հստակեցման, ուսումնական նյութերի, մեդիա խաղերի, գործնական առաջադրանքների և այլ ուսումնամեթոդական բովանդակությունների պատրաստման ուղղությամբ, տրամադրելու է փորձագիտական խորհրդատվություն և աջակցություն՝ ըստ անհրաժեշտության ծրագրում ներգրավելով դրսում ճանաչված իր փորձագետներից: Ծրագրային հայտին կից ներկայացված են ՄՆԿ-ի երկու առաջատար փորձագետներ Նարինե Սաֆարյանի և Գեղամ Վարդանյանի ինքնակենսագրականները, ովքեր պատրաստակամ են ծրագրի շրջանակում իրականացնել փորձագիտություն և խորհրդատվություն: (*Կախված ծրագրի իրականացման ժամանակահատվածում ՄՆԿ-ի երկու փորձագետների աշխատանքային գրաֆիկից՝ ծրագրում որպես հիմնական մեդիա փորձագետ- ուսուցանող կընդգրկվի նրանցից մեկը, իսկ մյուսը խորհրդատվություն կանցկացնի առցանց՝ ըստ անհրաժեշտության):*

Լոռու մարզային ՀԿ-ներից ծրագրի իրականացման ընթացքում ակտիվորեն համագործակցելու ենք «Մեդիա ակումբ» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի հետ, որն ունի մեդիագրագիտության դասընթացներ վարելու հարուստ փորձ, ոլորտում կայացած մասնագետներ, «Մեդիա ակումբ»-ի հիմնադիր նախագահ, մեդիա փորձագետ և լրագրող-մանկավարժ Նարինե Մաթևոսյանը կամավոր հիմունքներով ընդգկված է լինելու սույն ծրագրում՝ որպես մեդիա փորձագետ-ուսուցանող:

Արտերկրից ծրագրի շահառուների ներգրավման համար համագործակցելու ենք «Եվրոպական ուղիներ» միջազգային ՀԿ-ի, «Ստեփանավանի երիտասարդական կենտրոնի», «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ների, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Միջազգային կապերի բաժնի, ինչպես նաև ծրագրի ՀՀ մարզերի շահառու բուհերի՝ ԱՊՀ անդամ երկրների գործընկեր բուհերի միջազգային կապերի բաժինների հետ, որոնք աջակցելու են ծրագրի հայտարարության և հայտադիմումի տարածման և ԱՊՀ երկրներից շահառուների ներգրավման հարցում: Այս հարցում աջակցելու է նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համաչափ համագործակցության բարձրագույն ուսումնական հաստատությունների խորհուրդը, որն իր ցանցով կտարածի ծրագրի մասին հայտարարությունն ու մասնակցության հայտադիմումը:

Ռիսկերի գնահատում

Որոնք են ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը և դրանց հաղթահարման ռազմավարությունը:

Հնարավոր ռիսկ ենք դիտարկում նաև ծրագրի իրականացման ընթացքում որոշ բուհերի ղեկավարների կողմից համագործակցության ցանկության բացակայությունը (չնայած որ ներկա պահին բուհերից մի մասի հետ արդեն առկա է նախնական բանավոր պայմանավորվածություն): Այնուամենայիվ տվյալ բուհի ուսանողներին այլընտրանքային ճանապարհներով (բուհի հարակից տարածքում հայտարարություններ փակցնելով, ընկերների և համացանցի միջոցով տեղեկացնելով) հնարավորություն կտրվի մասնակցել ծրագրի շրջանակում կազմակերպվող միջոցառումներին թե՛ թվային, թե՛ իրական միջավայրում: Որպես ռիսկ դիտարկում ենք նաև առցանց դասընթացների և հանդիպումների իրականցման ընթացքում ինտերնետ կապի որակը, իսկ ԱՊՀ անդամ պետություններից ներգրավված շահառուների պարագայում, սրան ավելանում է նաև ժամային գրաֆիկի համապատասխանեցումը ՀՀ ժամանակին: Տվյալ ռիսկը կառավարելու համար առցանց դասընթացները նախատեսել ենք անցկացնել մի քանի փուլով՝ հնարավորություն տալով շահառուներին մասնակցել իրենց հարմար օրն ու ժամին, ինչպես նաև ինտերնետ կապի վատ որակի դեպքում հնարավորություն ունենալ մեկ այլ օր ևս միանալու դասընթացին:

Ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր ռիսկ ենք դիտարկում COVID-19 կամ այլ համավարակի հնարավոր սրացմամբ, պատերազմի, երկրաշարժի կամ այլ բնական աղետի պատճառով առաջացած ֆորսմաժորային իրավիճակը և Հայաստանի Հանրապետությունում արտակարգ կամ ռազմական դրության վերահաստատումը: Նման իրավիճակում ՀԿ-ն կառաջնորդվի ՀՀ-ում արտակարգ կամ ռազմական դրությունների համար պետության կողմից սահմանված իրավական նորմերով՝ անհրաժեշտության դեպքում երկարաձգելով ծրագրի իրականացման տվյալ փուլի ժամկետը՝ առանց աշխատակազմի լրացուցիչ վարձատրության և այլ ֆինանսական ծախսերի: Կախված ստեղծված իրավիճակից՝ ծրագրի աշխատակազմը կցուցաբերի ճկունություն և արագ արձագանքելով ստեղծված իրադրությանը, կմշակի ծրագրի իրականացման նոր մեթոդաբանություն: Օրինակ, եթե համավարակի հնարավոր սրացմամբ պայմանավորված կրկին արգելվեն մասսայական միջոցառումները, կկատարվի ծրագրային բյուջեի վերահաշվարկ և ծրագրով նախատեսված օֆլայն դասընթացներն ու հանդիպումները ևս կանցկացվեն առցանց ձևաչափով:

Նմանատիպ ծախսերը և այլ ռիսկերի կանխարգելման հետ կապված հնարավոր ծախսերը կհոգա ծրագիրն իրականացող կազմակերպությունը՝ «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն ՀԿ-ն:

Ծրագրի աշխատակազմը

Նկարագրել ներգրավվող և վճարվող աշխատակիցների և/կամ փորձագետների պատասխանատվության շրջանակը՝ համաձայն աղյուսակի.

Հ/Հ	Անուն Ազգանուն	Պատասխանատվության շրջանակը	Աշխատակցի կամ փորձագետի փորձառությունը
1	**Պետրոս Պետրոսյան** (ծրագրում աշխատելու է 2 ամիս վճարովի, 5 ամիս անվճար հիմունքներով):	**Ծրագրի ղեկավար**- Պատասխանատու է սույն ծրագրի արդյունավետ իրականացման, ծրագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամանկացույցին և բյուջեին համապատասխան իրականացման, ծրագիկ ընթացիկ և վերջնական գնահատման, ռիսկերի կառավարման, մոնիթորինգի, ծրագրի լուսաբանման ու տեսանելիության ապահովման, ծրագրային արդյունքների ամփոփման, նկարագրական հաշվետվության պատրաստման համար:	«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ փոխնախագահն է, մի շարք ծրագրերի ղեկավարը: Ունի ծրագրեր մշակելու և կառավարելու շուրջ 10 տարվա փորձ, կազմակերպչական մեծ ջիղ, թիմային աշխատանքի, հաղորդակցման, ռիսկերի կառավարման, բանակցություններ վարելու հմտություններ:
2	**Վահե Մարդոյան** (ծրագրում աշխատելու է 2 ամիս վճարովի, 5 ամիս անվճար հիմունքներով):	**Ծրագրի համակարգող** -Պատասխանատու է ծրագրի վերաբերյալ տեղեկատվության պատրաստման, տարածման, շահառուների բացահայտման և ներգրավման, նրանց հետ հետադարձ կապի ապահովման, ծրագրի ֆեյսբուքյան խմբում և զրուցարանում ներառման, ծրագրով նախատեսված գործողությունների համակարգման, մասնավորապես՝ առցանց ամառային	«ԿԱՄՔ» ՀԿ-ի անդամ է, սովորում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական համալսարանում, մարքեթինգի բաժնում: Ունի տարբեր ՀԿ-ների հետ համագործակցելու, նախագծեր համակարգելու փորձ: 2022թ. եղել է «ԿԱՄՔ» ՀԿ-ի կողմից

		ճամբարի, ինտելեկտուալ խաղ-մրցույթի կազմակերպչական աշխատանքների, գիտելիքների գնահատման թեստերի արդյունքների վերլուծության, ծրագրի արդյունքների ամփոփման, հանրայնամցման և տարածման համար:	իրականացված «Եղիր գրագետ և պաշտպանված թվային միջավայրում» նախագծի շահառու, ապա ընտրվել թվային գրագիտության համայնքային առաջնորդ, ներգրավվել նախագծի համակարգման և համայնքներում մեդիագրագիտության տեղեկատվական արշավների իրականացման աշխատանքներին: 2023թ. հաջողությամբ համակարգել է «ԿԱՄՔ» ՀԿ-ի կողմից իրականացված «Թվային միջավայրում պաշտպանված և մեդիագրագետ ուսանող» մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության ծրագիր լոռեցի երիտասարդների համար» նախագիծը:
3	Ղուկաս Ղուկասյան	Ծրագրի հաշվապահ- Պատասխանատու է ծրագրի ընթացիկ հաշվապահության, ծրագրի աշխատակազմի և մատակարարների հետ պայմանագրերի կնքման, գնումների գործընթացի համակարգման, ինչպես նաև ծրագրի ֆինանսական հաշվետվության կազմման համար:	Ունի համապատասխան մասնագիտական կրթություն: Աշխատել է մի շարք պետական, միջազգային ու մասնավոր կազմակերպություններում՝ որպես հաշվապահ և գլխավոր հաշվապահ, եղել «Արդշինբանկ» ՓԲԸ Լոռու մասնաճյուղի, «Առեկսիմբանկ» ՓԲԸ Վանաձորի մասնաճյուղի կառավարիչ, Վանաձորի քաղաքապետարանի ֆինանսական բաժնի պետի տեղակալ, իրականացնում է տարբեր կազմակերպությունների, այդ թվում՝ «ԿԱՄՔ» ՀԿ-ի հաշվապահությունը: Մասնակցել է հաշվապահների վերապատրաստման բազմաթիվ դասընթացների, լիցենզավորված հաշվապահ է:
4	Գեղամ Վարդանյան	Ծրագրի մեդիա փորձագետ, ուսուցանող Մշակել ծրագրով նախատեսված դասընթացների կրթական ծրագիրը՝ դասընթացի օրակարգը, թեմաները, ուսումնական նյութի բովանդակությունն ու գործնական առաջադրանքները, մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ գիտելիքներ ու հմտություններ փոխանցել շահառու երիտասարդներին օնլայն և օֆլայն դասընթացների և կոնֆերանսի ընթացքում, ըստ անհրաժեշտության տրամադրել մասնագիտական խորհրդատվություն, ծրագրով նախատեսված ինտելեկտուալ խաղի ընթացքում հանդես գալ որպես մեդիա փորձագետ, խմբագրել շահառուների ներկայացրած հոդված-զեկույցները, աջակցել ուսուցողական-խորհրդատվական տեսահոլովակի պատրաստմանը:	Ունի ավելի քան 20 տարվա լրագրողի, մեդիա դասընթացավարի եւ մեդիա պրոդյուսերի փորձառություն: Հատկապես մասնագիտացած է ինտերնետային լրագրության զարգացման, սոցիալական մեդիայի ոլորտում: Աշխատում է «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»-ում՝ (նախկին «Ինտերնյուս») որպես պրոդյուսեր, Media.am կայքի գլխավոր խմբագիրն է: Տարբեր մեդիա ուղղություններով (մեդիագրագիտություն, կիբերգրագիտություն, թվային գրագիտություն, բլոգերություն, քաղաքացիական լրագրություն...) դասընթացներ է վարում լրագրողների, ուսանողների, հասարակական կազմակերպությունների համար: Բազմաթիվ վավերագրական ֆիլմերի հեղինակ է:

5	Նազիկ (Նազելի) Ավագյան	**Ծրագրի մեդիա փորձագետ, ուսուցանող-** Մշակել ծրագրով նախատեսված դասընթացների կրթական ծրագիրը՝ դասընթացի օրակարգը, թեմաները, ուսումնական նյութի բովանդակությունն ու գործնական առաջադրանքները, մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ գիտելիքներ ու հմտություններ փոխանցել շահառու երիտասարդներին օնլայն և օֆլայն դասընթացների և կոնֆերանսի ընթացքում, ըստ անհրաժեշտության տրամադրել մասնագիտական խորհրդատվություն, ծրագրով նախատեսված ինտելեկտուալ խաղի ընթացքում հանդես գալ որպես մեդիա փորձագետ, խմբագրել շահառուների ներկայացրած հոդված-զեկույցները, աջակցել ուսուցողական-խորհրդատվական տեսահոլովակի պատրաստմանը:	«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ հիմնադիր-նախագահն է: Ունի դասընթացներ վարելու, ծրագրեր մշակելու և կառավարելու ավելի քան 10 տարվա փորձ: Եղել է Ստեփանավանի քաղաքապետարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար, աշխատել է «Ֆորտունա» Լոռու մարզային, «Երկիր Մեդիա» հեռուստաընկերություններում, թղթակցել տարբեր ԶԼՄ-ների՝ կայքեր, թերթեր: Ներկայումս Հայաստանի ազգային ագրարային համալսարանի լրատվության և հանրային կապերի ղեկավարն է: Հեղինակել է մի շարք հոդվածներ՝ առցանց և տպագիր, հեռուստահաղորդումներ («Երկիր Մեդիա»- «Համայնքապատկեր» հաղորդաշար) և մեդիագրագիտության վերաբերյալ ուսումնական տեսաֆիլմերի սցենարներ, վարել մեդիա դասընթացներ:
6	Նարինե Սաֆարյան (Ծրագրում ներգրավվելու է անվճար՝ կամավոր հիմունքներով)	**Ծրագրի մեդիա փորձագետ, ուսուցանող-** Մշակել ծրագրով նախատեսված դասընթացների կրթական ծրագիրը՝ դասընթացի օրակարգը, թեմաները, ուսումնական նյութի բովանդակությունն ու գործնական առաջադրանքները, մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության վերաբերյալ գիտելիքներ ու հմտություններ փոխանցել շահառու երիտասարդներին, ըստ անհրաժեշտության տրամադրել մասնագիտական խորհրդատվություն, ծրագրով նախատեսված մրցույթների, ինտելեկտուալ խաղի ընթացքում հանդես գալ որպես մեդիա փորձագետ, աջակցել ուսուցողական-խորհրդատվական տեսահոլովակի պատրաստմանը:	Լրագրող, պրոդյուսեր, ոչ ֆորմալ կրթության մասնագետ՝ 30 տարվա փորձառությամբ: Մշակել է լրագրության, մեդիա կրթության, մեդիագրագիտության, մեդիա աշխատանքին վերաբերյալ բազմաթիվ կրթական ծրագրեր: Հեղինակել է հոդվածներ, ռադիոհաղորդաշարեր, բազմաթիվ մուլտիմեդիա պատմություններ: «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»-ի (նախկին «Ինտերնյուս») ուսումնական ծրագրերի ղեկավարն է, օնլայն լրագրության և լրագրողական հմտությունների դասախոս:
7	Անի Անանյան	**Ծրագրի թարգմանիչ-**Պատասխանատու է ծրագրի ընթացքում ըստ անհրաժեշտության հայերեն-ռուսերեն և հակառակ ուղղությամբ բանավոր և գրավոր թարգմանությունների համար, մասնավորապես՝ ծրագրի հայտարարության և հայտադիմումի թարգմանություն, այլազգի շահառուների հետ ռուսերենով նամակագրության ապահովում, առցանց դասընթացների և կոնֆերանսի ընթացքում հայերենից ռուսերեն և հակառակ ուղղությամբ թարգմանություն, շահառուների ներկայացրած հոդված-զեկույցների ռուսերենից հայերեն և հակառակ թարգմանություն, ուսումնական տեսահոլովակի նշագրերի թարգմանություն:	Գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի բակալավրիատը և մագիստրատուրան, ունի նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորում, համագործակցել, հայերեն-ռուսերեն և հակառակ ուղղությամբ գրավոր և բանավոր, (այդ թվում համաժամանակյա) թարգմանություններ է իրականացրել հայաստանյան և միջազգային մի շարք հեղինակավոր ընկերությունների հետ, ինչպիսիք են՝ ՄԱԿ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ Սփյուռքի նախարարություն, «Զանգակ» հրատարակչություն, Գյոթե կենտրոն՝ «Ինչպես կարդալ մեդիան» նախագիծ, Brevis հետազոտական ընկերություն,

			IMR հետազոտական ընկերություն, Herbalife միջազգային կորպորացիա, «Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստան», «Այբ» կրթական հիմնադրամ, «Մոսկվայի տուն» մոսկովյան մշակութագործարարական կենտրոն, «APKA» լրատվական գործակալություն (լրագրող, թարգմանիչ)...

** Կախված ծրագրի իրականացման ժամանակահատվածում ՄՆԿ-ի երկու փորձագետների՝ Գեղամ Վարդանյանի և Նարինե Սաֆարյանի աշխատանքային գրաֆիկից ու զբաղվածությունից՝ ծրագրում մասնավորապես՝ դասընթացների իրականացման ժամանակահատվածում, որպես հիմնական մեդիա փորձագետ-ուսուցանող կընդգրկվի նրանցից մեկը (ըստ նրանց հետ նախապես համաձայնության), իսկ մյուսը՝ կանցկացնի առցանց խորհրդատվություն՝ ըստ անհրաժեշտության: Ուստի ծրագրային հայտին կից ներկայացնում ենք ոլորտում առաջատար երկու փորձագետների ինքնակենսագրականները և համաձայնագրերը՝ սույն ծրագրում ընդգրկվելու վերաբերյալ:*

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն
հասարակական կազմակերպություն
Քաղաք Ստեփանավան, Եկեղեցի փ., N 24
«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11808036948100, ՀՎՀՀ 06950266
kamqlori@gmail.com
Նախագահ՝
Ն. Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 4
«15» 04 2024 թ.
N ԵԴ -09-2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2024 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Փաստաթղթերն ընդունեց՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված 5
«15» «04» 2024 թ.
N 47-09-2024 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

2.6 Խնդրում ենք նշել, ծրագրի ազդեցության վերլուծություն՝ նշելով ծրագրին մասնակից երիտասարդների թիվը,

2.7 միջոցառմանն ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց թվաքանակը,

2.8 միջոցառման իրականացման տարածքային ընդգրկվածությունը,

2.9 միջոցառման արդյունքի հասանելիությունը տարբեր հարթակներում,

2.10 մասնակիցների գոհունակությունը ծրագրի արդյունքներից,

2.11 ծրագրի իրականացման ընթացքում ստեղծված կայուն արժեքները,

2.12 ծրագրի շրջանակներում օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ֆինանսական ծախսերը

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն
հասարակական կազմակերպություն
Ք. Ստեփանավան, Եկեղեցի փ., N 24
«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11808036948100, ՀՎՀՀ 06950266
kamqlori@gmail.com
Նախագահ՝
Ն. Ավագյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 6
«15» «04» 2024 թ.
N ԵԴ -09-2024 պայմանագրի

Կազմակերպություն	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում կազմակերպությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.